



ԽԱՉԱՏՈՒՐ ՍՈՒՐԵՆԻ ԱԶԻԶՅԱՆ

Ծնվել է 1948թ. Երևանում: Ավարտել է Երևանի Թերլեմեզյանի անվան գեղարվեստի ուսումնարանը և Գեղարվեստաթատերական ինստիտուտը:

1979-ից Հայաստանի և ԽՍՀՄ Նկարիչների միության անդամ է: ՀՀ Վաստակավոր նկարիչ է, պրոֆեսոր:

2002-ից Հայաստանի Նկարիչների միության քարտուղարն է: Ունի բազմաթիվ մրցանակներ և պատվոգրեր: Համաշխարհային հայկական կոնգրեսի, Ռուսաստանի հայերի միության և ՀՀ

Միությունի նախարարության՝ լավագույն ստեղծագործության մրցանակաբաշխության եռակի դափնեկիր է:

Մասնակցել է միջազգային ցուցահանդեսների՝ Ռուսաստանում, ԱՄՆ-ում, Ֆրանսիայում, Սոնդոլիայում, Մուդանում, Կորեայում, Լիբանանում, Ֆինլանդիայում, Բրազիլիայում: Անհատական ցուցահանդեսներ է ունեցել ԱՄՆ-ում, Ֆրանսիայում, Երևանում, Ստեփանակերտում, Արմավիրում, Մարտակերտում:

Աշխատանքները գտնվում են Հայաստանի պետական պատկերասրահում, աշխարհի շատ թանգարաններում ու հավաքածուներում:

Ազիզյանը ստեղծում է կոմպոզիցիոն թեմատիկ ստեղծագործություններ, որոնց հիմնական թեման Մարդն է՝ իր սիրով դեպի Հայրենիքը: Ունի նաև բնանկարներ և գրաֆիկական աշխատանքներ:



ՀԱՅԿԱԿԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԻՐԱՎԱԴԱՇՏՊԱՆ ԿԵՆՏՐՈՆ

ISSN 1829-4871

ՎԱՍՆ ԱՐԴԱՐՈՒԹԵԱՆ

**ԻՐԱՎԱԿԱՆ ԳԻՏԱՄԵԹՈԴԻԿԱՆ ՀԱՆԴԵՍ
LEGAL SCIENTIFIC-METHODICAL REVIEW
ПРАВОВОЙ НАУЧНО-МЕТОДИЧЕСКИЙ ЖУРНАЛ**

2

(76)

2017

Վասն ԱՐԴԱՐՈՒԹԵԱՆ

2 / 2017

Բուն Հայոց 4510 ամի

For the Sake of JUSTICE

2 / 2017

Core Armenian 4510

(76)

ՀՐԱՏԱՐԱԿՎՈՒՄ Է ՎԱՆԱԶՈՐԻ
ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԳԻՏԱԿԱՆ
ԽՈՐՀՐԴԻ ԵՐԱՇԽԱՎՈՐՈՒԹՅԱՍԲ:

ՀՐԱՏԱՐԱԿՎՈՒՄ Է ԳՈՐԻՍԻ «ՍՅՈՒՆԻՔ»
ԻՆՏԵՐՆԱԿԱՆ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ
ԵՐԱՇԽԱՎՈՐՈՒԹՅԱՍԲ:

Գլխավոր խմբագիր

ԳԵՎՈՐԳ ԳԱԳԻԿԻ ՄԱՆՈՒԿՅԱՆ

Իրավաբան

Գիտական խմբագրական խորհուրդ

ՌՈՒԲԵՆ ՀՈՎՍԵՓԻ ԱՎԱԳՅԱՆ

*Իրավաբանական գիտությունների դոկտոր,
պրոֆեսոր, Ազգային անվտանգության խնդիր-
ների համահայկական ակադեմիայի ակադեմիկոս*

ՄԱՆՈՒԿ ԱՇՈՏԻ ՄԿՐՏՉՅԱՆ

*Մանկավարժական գիտությունների դոկտոր,
Ֆիզիկա-մաթեմատիկական գիտությունների
թեկնածու, դոցենտ, ՌԴ Սոցիալական և
մանկավարժական գիտությունների
ակադեմիայի ակադեմիկոս*

ԱՆԻ ԳԵՎՈՐԳԻ ՔԱԼԱՅՅԱՆ

*Հոգեբանական գիտությունների դոկտոր,
Կրթության դոկտոր, Նյու-Յորքի Կոլումբիայի
համալսարանի ուսուցչական քոլեջի պրոֆեսոր*

ԱՐՄԵՆ ՄԵՐՈՋԱՆԻ ՄԱԶՄԱՆՅԱՆ

Իրավաբանական գիտությունների դոկտոր

ՍԱՄՍՈՆ ՄԱՆԹԱՇԻ ՔԱՌՅԱՆ

*Պատմական գիտությունների դոկտոր,
պրոֆեսոր*

ԳՐԱՎԻԿ ԱՇՈՏԻ ԲԱԲԱՅԱՆ

*Մանկավարժական գիտությունների թեկնածու,
պրոֆեսոր*

ԻԶԱԲԵԼԼԱ ԳՐԱՎԻԿԻ ԲԱԲԱՅԱՆ

*Մանկավարժական գիտությունների թեկնածու,
դոցենտ*

ՄԱՐԿՄԱՆ ՄԱՏՎԵՅԻ ԶԻԼՖՈՒԴԱՐՅԱՆ

Իրավաբանական գիտությունների թեկնածու

Խմբագիրներ

ՍՈՖԻԱ ՍԻՄՈՆԻ ԲԱԲԱՅԱՆ
ՌՈՒԲԵՆ ՎԱԶԱԳԱՆԻ ՊԱՐՍԱՄՅԱՆ

Համակարգչային ձևավորող
ԼՈՒՍԻՆԵ ՏԻԳՐԱՆԻ ԹԵՐԶՅԱՆ

PUBLISHED ON THE RECOMMENDATION
OF THE SCIENTIFIC COUNCIL OF THE
VANADZOR STATE UNIVERSITY

PUBLISHED ON THE RECOMMENDATION
OF THE SCIENTIFIC COUNCIL OF THE
"SYUNIK" INSTITUTE OF GORIS

Editor-in-Chief

GEVORK GAGIK MANOUKIAN

Lawyer

Scientific Editorial Board

RUBEN HOVSEP AVAGYAN

*Doctor of Law, Professor
Academician of All Armenian Academy of the
National Security Problems*

MANOUK ASHOT MKRTCHYAN

*Doctor of Pedagogical Sciences,
Candidate of Physical and Mathematical
Sciences, Academician of the
Russian Academy of Pedagogical and
Social Sciences*

ANI KEVORK KALAYJIAN

*Professor of Psychology at Teachers College,
Columbia University, Doctor of Science of
Psychology and Doctor of Education*

ARMEN MERUJAN MAZMANYAN

Doctor of Law

SAMSON MANTASH QARYAN

Doctor of Historical Sciences Professor

GRAVIK ASHOT BABAYAN

Candidate of Pedagogical Sciences, Professor

IZABELLA GRAVIK BABAYAN

Candidate of Pedagogical Sciences, associate professor

MARTIN MATVEY ZILFOUGHARYAN

Candidate of Law Sciences,

Editors

SOFIA SIMON BABAYAN
RUBEN VACHAGAN PARSAMYAN

Designer

LUSINE TIGRAN TERZIAN

ԱՅՍ ՀԱՄԱՐՈՒՄ

ՌՈՒԲԵՆ ՀՈՎՍԵՓԻ ԱՎԱԳՅԱՆ.
«Սբ. Ներսէս Լամբրոնացի Կիլի -
կեցին և նրա օրենքները» 4

ՄԱԼԻԿ ՄԻՐԱՔԻ ԹԵԼՈՒՆՅ.
«Անձի անձեռնմխելիության և ընտա -
նիքի դեմ ուղղված հանցագործու -
թյունները հայ հին, միջնադարյան և
արդի քրեական իրավունքում. համե -
մատական վերլուծության փորձ» . . . 14

ՌՈՒԲԵՆ ՎԱԶԱԳԱՆԻ ՊԱՐՍԱՄՅԱՆ.
«Թուրքական պետությունը Հայոց ցե -
ղասպանության ծրագրող և կազմա -
կերպիչ. վերլուծություն ըստ Սողոմոն
Թեհլեյանի դատավարության
նյութերի. (Բեռլին, 2-3 հունիսի,
1921թ.)» 24

ԱԼԵՔՍԱՆԴՐ ՍԻՄՈՆԻ ՍԱՄԱՐՉՅԱՆ.
«Մարդկային անհատը, նրա ինքնա -
նույնացումը (ինքնաճանաչումը) և
նույնացումը» 41

ՔՐԻՍՏԻՆԵ ՍԱՐԳՍԻ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ.
«Մորատորիումի ինստիտուտի իրավա -
կան կարգավորման հիմնախնդիրները
սնանկության վարույթում» 48

ՄԱԿ-ի էջ.
«Ահաբեկչությունը և Մարդու
իրավունքները» ՄԱԿ-ի Գլխավոր
քարտուղարի Անտոնիո Գուտերեսի
2017թ. նոյեմբերի 16-ի ճառը Լոնդոնի
համալսարանում. 62

IN THIS ISSUE

RUBEN HOVSEPH AVAGYAN:
"St. Nerses Lambronatsi Cilician and His
Laws" 4

MALIK MIRAK TELUNTS:
"Crimes Against Personal Inviolability of
Individual and Family in the Ancient,
Medieval and Modern Armenian Criminal
Law: An Experience of Comparative
Analysis". 14

RUBEN VACHAGAN PARSAMYAN:
"Turkish State as the Organizer of the
Armenian Genocide: Analysis based on
Soghomon Tehleyan's Trial Materials.
Berlin, June 2-3, 1921." 24

ALEXANDER SIMON SAMARCHYAN:
"Human Individual, His Selfidentification
and Identification". 41

KRISTINE SARGIS ALEXSANYAN:
"Legal Regulation Problems in
Bankruptcy Procedure of Moratorium
Institution" 48

UN Page:
"Terrorism and Human Rights".
H.E.Mr. Antó nio Guterres, UN Secretary -
General's Speech at SOAS, University of
London, on November 16, 2017. 62

2/76 2017

For the Sake of
JUSTICE



РУБЕН ОСИПОВИЧ АВАКЯН

Доктор юридических наук, профессор,
Академик Всеармянской Академии
проблем национальной безопасности

НЕРСЕС ЛАМБРОНАЦИ КИЛИКИЙСКИЙ (1153 - 1198) И ЕГО ЗАКОНЫ

В 646 г. армянского летосчисления [1197г.] Левон [Левон II Великий] послал в Константинополь архиепископа Тарса со множеством подарков, Тер-Нерсеса [Нерсеса Ламбронаци], сына Ошина, благородного князя Халкама, своего дядю по матери, брата Бакура и парона Погося из своего дворца [“дарпаса”], которые отправились туда, чтобы принести заверения в дружбе Левона [Левона II Великого].

Тер-Нерсес был человек мудрый, ученый и всесторонне развитый. К нему пришли все греческие [византийские] ученые и в течение нескольких дней спорили с ним относительно вероучения и церковных обрядов. Благодаря своей мудрости Тер-Нерсес их всех убедил ...

Смбат [Спарамет-Гундстабль] (XIII в.)¹

Архивные материалы, соответствующие армянские рукописи, а также работы средневековых и современных историков показывают, что многие церковные деятели в Киликийской Армении занимали высшие государственные должности или были советниками короля (царя), среди которых был и архиепископ Тарса Нерсес Ламбронаци (1152/1153 – 1198) – крупнейший государственный и общественно-церковный деятель, философ, богослов, поэт, музыкант, ученый, переводчик, оратор Киликийской Армении. Будучи из княжеского рода, он избрал себе духовное поприще и стал очень молодым вардапетом, а в

1175 г. – архиепископом. Был всесторонне образован, свободно владел греческим, латинским, армянским, а также знал многие другие языки².

Отец Нерсеса Ошин II был владельцем крепости Ламброн. Его дед по отцу князь Ошин I, родом из Великой Армении, г. Гандзака, в 1123 г. переехал в Киликию и служил при императоре Византии. Мать Нерсеса по имени Шаандухт была дочерью брата Нерсеса Шнорали Благодатного. По утверждению авторитетных исследователей, она была не только образованной и благородной женщиной, но и достойной матерью,

¹Смбат Спарамет. Летопись / Пер. с древнеарм., пред. и прим. А. Г. Галстяна. Ер.: Айастан, 1974, с. 242

²Краткая литературная энциклопедия / Гл. ред. А. Сурков. М., 1968. Т. 5, с. 242

родив и воспитав восемь детей, среди них Нерсес был третьим³.

Следует заметить, что его светское имя было “Смбат”, а прозвище “Ламбронати” он получил от имени крепости Ламброн. Когда Смбату исполнилось 16 лет, мать отвезла его в Ромкла и передала Католикосу Нерсесу Шнорали для церковного воспитания и получения дальнейшего образования. Нерсес проявил незаурядные способности. В частности, доктор исторических наук Гарник Ананян пишет: “... удивительные способности и трудолюбие проявил юноша. Оправдав доверие Католикоса армян, для продолжения учебы он отправляется в один из монастырей Черной горы”⁴.

Нерсес Ламбронати как архиепископ был широко известен не только в области литературы, образования и культуры, международной дипломатии, но и своим свободомыслием в церковных вопросах, активно боролся за сближение армянской церкви с римской. Следует отметить, что за свое “латинофильство” Нерсес Ламбронати, который был советником по церковным делам у короля (царя) Киликийской Армении Левона II Великого, был удален им со своего двора в г. Тарс, где он был архиепископом. Кстати, по этому поводу Нерсес Ламбро-

нати написал “Послание королю (царю) Левону” [Левону II Великому], которое и сегодня является яркой страницей в публицистике.

Справедливости ради, отметим, что он выражал, в целом, интересы христиан, желая объединить всех христиан для борьбы с исламом.

Нерсес Ламбронати стремился при помощи реформ укрепить церковную систему. Он, в частности, пишет: “... Пусть епископ возводит священника в духовный сан, а архиепископ – епископа”⁵. Он обвиняет Католикоса Григория Отрока (1173 – 1193) в том, что он превратил армянскую церковь в свою наследственную собственность, т. е. в свою вотчину⁶.

Нерсесу Ламбронати принадлежат переводы таких богословских трудов, как «Толкование “Откровения Иоанна”», “История папы Римского Григория”, “Установление святого Бенедикта”. Его перу принадлежит также ряд других богословских трудов, которые перечислены средневековым историком Киракосом Гандзакеци. Особенно известны его “Синодальные речи” и “Витийство-ораторство”, которое было издано в 1749 г., в 1810 г. переведено на латинский, в 1834 г. – на немецкий, в 1865 г. –

³Акопян Г. А. Нерсес Шнорали. Ер., 1964 (на арм. яз.), Акопян Г. А. Нерсес Ламбронати (жизнь и деятельность) / Отв. ред. Г. В. Абгарян. Ер.: АН Арм. ССР, 1971 (на арм. яз.), с. 40 – 42; Алишан Гевонд. Шнорали и подробности о нем. Венеция, 1873 (на арм. яз.), с. 281; Ананян Г. Г. Нерсес Ламбронати-оратор. Антилиас, 1995 (на арм. яз.), с. 5 – 6; Самуэл Анеци. Извлечения из книг историков. Вагаршапат, 1899 (на арм. яз.), с. 117.

⁴ Подробно о его жизни и церковной деятельности см. работы члена католической конгрегации, патриота-армянина Микаэла Чамчяна “История Армении”, Г. Г. Ананяна “Нерсес Ламбронати-оратор”, Н. Акиняна “Нерсес Ламбронати ...”, Г. А. Акопяна “Нерсес Ламбронати (жизнь и деятельность)” и др. О его жизни и деятельности (не по линии юриспруденции) писали также такие известные исследователи, как Г. Алишан, М. Х. Абегян, К. Е. Басмаджян, Киракос Гандзакеци, Г. Зарбаналян, Магакия Орманиян, Я. Ошакан и мн. др.

⁵ Микаелян Г. Г. История Киликийского армянского государства. Ер., 1952, с. 261; Нерсес Ламбронати. Размышление о церковном строе. Венеция, 1847 (на арм. яз.), с. 545.

⁶ Нерсес Ламбронати. Размышление о церковном строе. Венеция, 1847 (на арм. яз.), с. 546.

на русский и другие языки народов мира. Он выполнил также новый перевод Апокалипсиса и добился того, чтобы собор Армянской церкви в Константинополе принял его в состав совета авторов по переводу Св. Писания Нового Завета, т. к. до этого данная книга не входила в армянскую Библию.

Нерсес Ламбронати написал толкования “Псалтыря”, “Притчей Соломоновых”, сочинений христианского богослова, философа, епископа Григория Нисского (ок. 335 – 394, епископ с 372 – 375 гг. и вновь с 379 г.) и др. В частности, он успел написать более двух десятков шараканов, т. е. духовных песен, поющие и сегодня в армянских церквях. Заметим, что многие его работы издавались на латинском, немецком, английском, французском, греческом, русском и на других языках. В целом, его вышеупомянутые труды являются ценнейшими источниками по истории армянской церкви XII в.

Деятельность Нерсеса Ламбронати проходила в Тарсе, Ламбронне, Ромкле и других городах Киликийской Армении. За счет отцовского наследия он содействовал армянским школам, библиотекам, переписчикам рукописей, церквям и монастырям. Он также выделял денежные средства для приобретения рукописей, помощи неимущим, для построения прекрасной церкви при монастыре близ неприступной крепости Ламброн⁷.

Здесь нам представляется целесооб-

разным привести слова Григора Акопяна из его монографии “Нерсес Ламбронати (Жизнь и деятельность)”: «Оставленное отцом наследство для Нерсеса Ламбронати в 30 000 золотых он разделил на три равные части. Одну часть Нерсес потратил на восстановление и строительство церквей и монастырей, другую часть он потратил на 300 обездоленных: каждую неделю (по средам и пятницам) он кормил их у входа в церковь. А из оставшейся части он платил переписчикам рукописей, приобретал книги и рукописи, часть которых дарил киликийским монастырям и библиотекам»⁸.

Следует отметить, что, наряду с вышеуказанными произведениями, в наследии Нерсеса Ламбронати особое место занимают его труды в области юриспруденции. При этом различные источники, архивные материалы, рукописи, заключения ученых-историков и других исследователей свидетельствуют, что Нерсес Ламбронати перевел на армянский язык, с последующей редакцией, такие нормативно-правовые акты, как “Гражданский закон”, “Военный закон”, “Новый краткий сборник законов”, “Законы христианских царей – победоносных Константина, Феодосия и Льва”, “Законы и писания Моисеевы из книги Исход”, “Законы, выписанные из книги Левит”, краткая выборка из отдельных подглав “Византийского законоположения”, “Закон о степени родства”, “Краткая выборка законов царей” и др.⁹. Среди них

⁷ Авакян Р. О. Памятники армянского права. Ер., 2000, с.235; Ананян Г. Г. Нерсес Ламбронати-оратор. Антилиас, 1995 (на арм. яз.), с. 9.

⁸ Акопян Г. А. Нерсес Ламбронати (жизнь и деятельность) / Отв. ред. Г. В. Абгарян. Ер. : АН Арм. ССР, 1971 (на арм. яз.) с. 63 – 64.

⁹ Акопян Г. А. Нерсес Ламбронати (жизнь и деятельность) / Отв. ред. Г. В. Абгарян. Ер. : АН Арм. ССР, 1971 (на арм. яз.), с. 312. Тер-Саркисянц А. Е. История и культура армянского народа (с древнейших времен до начала XIX в.). М. : Восточная литература, 2008, с. 428

ценным источником для изучения общественно-политического строя и социально-правовой жизни киликийских армян, еще при господстве Рубенянов, являются – “Гражданский закон”, “Военный закон” и “Новый краткий сборник законов”, которые были составлены на основании Законов (Пятикнижия) Моисея – Моше¹⁰ и перевода с греческого языка на армянский язык (1191 – 1196) Византийского законодательного свода VIII в. – “Эклог” [составленного в сокращении императором Львом III Исавром (~ 680 – 741, с 717 г. император) и его сыном Константином V Копронимом (718 – 775, с 741 г. император) из Институций, Дигест, Кодекса и Новелл – конституций Юстиниана I (482/483 – 565)] и византийского “Воинского закона”, с редакционными изменениями применительно к условиям феодалной Киликийской Армении¹². Об этом, в частности, проф. Алексей Сукиасян пишет: «Архиепископ Тарса Нерсес Ламбронати в 1196 г. перевел с греческого среди других правовых памятников также “Закон Льва и Константина”, т. е. “Эклогу”, и “Военные законы”, и составленный им на их основе [данный] Сборник законов подарил “тем, которые любят руководствоваться законами ...”»¹². О причинах и обстоятельствах подготовки вышеупомянутого Сборника граждан-

данского и военного законов сам Нерсес Ламбронати в своей памятной записи (нишатакаране) сообщает (в переводе с арм. и ред. проф. Г. Г. Микаеляна)¹³, что “в 1193 г. армяне, проживавшие в ... Сирии под властью мусульманских правителей, обратились к Католикосу армян Григорию Отроку (1173 – 1193) по вопросу о необходимости иметь сборник законов гражданского права, т. к. мусульманские князья и судьи не занимались разбором тяжёлых дел армян на том основании, что, согласно заповеди Магомета (ок. 570 – 632), христиане должны судиться по своим законам. Поэтому многие армяне, имевшие между собой тяжбу, приходили к священникам и епископам и просили дать им для руководства сборник законов, но те не могли удовлетворить их просьбы. Католикос дал указание поискать, нет ли сборников законов в патриаршей библиотеке ... Гражданские законы не были найдены ни у князей, ни в церквях ...”¹⁴.

В 1196 г. новый Католикос армян Григорий Апират (1194 – 1203) поручил Нерсесу Ламбронати перевести сборник законов, полученный им от сирийского священника Феодосия¹⁵.

Заметим, что “Гражданский закон” и “Военный закон” Нерсеса Ламбронати, наряду с обычным правом киликийских

¹⁰ Авакян Р. О., Авакян Р. Р., Авакян Е. Р. Истоки памятников армянского права. Ростов н/Дону, 2014 (Антология памятников права народов Кавказа. Т. 20), с.381-462.

¹¹ Дашков С. Б. Императоры Византии. М., 1997, с.132-136.

¹² Микаелян Г. Г. История Киликийского армянского государства. Ер., 1952, с.262, Сукиасян А. Г. История Киликийского армянского государства и права / Под ред. проф. З. Г. Башинджяна. Ер., 1969.с.170.

¹³ Микаелян Г. Г. История Киликийского армянского государства. Ер., 1952, с.262,

¹⁴ Нерсес Ламбронати. Размышление о церковном строе. Венеция, 1847 (на арм. яз.),с.5

¹⁵ Микаелян Г. Г. История Киликийского армянского государства. Ер., 1952, с. 261

армян, церковными канонами, “Судебником” Мхитара Гоша и “Антиохийскими ассизами” (“Судебником”), применялись в “Киликийской Армении до принятия “Судебника” Смбата Спарапета-Гундстабля, созданного на разговорном языке киликийских армян, т. е. на “приятном для слуха языке”¹⁶.

Как уже отметили, среди сборников нормативно-правовых актов, применявшихся в Киликийской Армении, определенное место занимал “Гражданский закон” Нерсеса Ламбронца. Он был создан в период правления Левона II Великого (1196 г. – де факто, 1198 – 1219), перед его коронацией. В целом, Нерсес Ламбронца стремился в данном законе отразить изменения, происшедшие в общественно-политической жизни Киликийской Армении, приблизить содержание статей к нормам христианской морали для киликийских армян.

“Гражданский закон” Нерсеса Ламбронца впервые нами был введен в научный оборот на русском языке в 2016г.¹⁷. Он структурно состоит из 150 статей, посвященных, в основном, вопросам гражданского права (о наследовании, попечительстве, купле-продаже, займах, о правах и обязанностях слуг, о нормах, посвященных уголовному праву и др.). При этом большое место уделено вопросам регулирова-

ния брачно-семейных отношений. Заметим, что, по распространенному мнению исследователей, в том числе и самого автора данной книги, “Гражданский закон” в киликийской действительности не нашел широкого применения среди армянского населения.

Вместе с тем, следует отметить, что данный труд Нерсеса Ламбронца, как памятник права, существенно обогатив правовую мысль киликийских армян, дает ценный научный материал относительно их социально-правовой жизни. Он свидетельствует также о дальнейшем развитии феодально-правовых отношений в Киликийской Армении в XII в. до принятия “Судебника” Смбата Спарапета (XIII в.).

Вернемся к “Военному [Воинскому] закону” Нерсеса Ламбронца, который был им создан в 1196 г. на основе византийского “Воинского закона”. Заметим, что большинство исследователей современной историографии склоняются к мысли о том, что авторство и точную дату византийского [Воинского] закона установить невозможно. Однако, по мнению отдельных зарубежных исследователей, данный Закон приблизительно мог датироваться временем правления византийского императора (периода 582 – 602) Маврикия (по армянской версии, Морик Ошаканци из знатного армянского рода) (ок. 539 – 602)¹⁸, а его составителем мог быть Рүф, приближен-

¹⁶ Авакян Р. О. Памятники права Киликийской Армении (XI – XIV вв.). Ростов н/Дону, 2016 (Антология памятников права народов Кавказа. Т. 22).

¹⁷ Авакян Р. О. Памятники права Киликийской Армении (XI – XIV вв.). Ростов н/Дону, 2016 (Антология памятников права народов Кавказа. Т. 22), с.241-286

¹⁸ Авакян Р. О. Вклад кавказского этноса в мировую цивилизацию (на примере армянского и черкесского (абхазо-адыгского) этносов вне их исторической родины) // Право Кавказской цивилизации : истоки, особенности, мировое значение (к 150-летию окончания Кавказской войны) : Материалы IV Международной научно-практической конференции (г. Нальчик, 21 – 23 мая 2014 г.). Нальчик – Ростов н/Дону, 2015. С. 9 – 29. С. 12-13.

ный императора, автор “*Leges militares*”¹⁹.

Современная историография, в частности в лице Е. Э. Липшица и др., полагает, что византийский “Воинский закон” «вероятно, был издан вслед за “Эклогой” в том же VIII столетии»²⁰.

Как справедливо отмечают многие исследователи, данный византийский “Воинский закон” посвященный военному делу, основанный на статьях Дигест и Кодекса Юстиниана, представляет собой компиляцию из так называемого “Стратегикона Маврикия” (VI – VII вв.), “Тактики Льва” (конец IX – начала X в.) и переработанных норм Дигест и Кодекса Юстиниана, а также статей Эклоги, Прохирона и Василика.

Таким образом, ограничившись вышеизложенным, отметим, что, согласно достоверным данным, византийский “Воинский закон” впервые был издан еще в начале второй половины XVI в., в конце того же столетия увидело свет второе его издание. Полный текст данной работы был издан А. Г. Монферратом в 1889 г., к которому не раз обращался известный исследователь греко-византийского права Карл-Эдуард Цахариэ фон Лингенталь (1812 – 1894).

Для сравнительного анализа с киликийским “Военным [Воинским] законом” в данной главе мы приводим содержание русского перевода одного из вариантов рукописей византийского “Воинского закона”, по изданию К. Э. Цахариэ фон Лингенталья. Заметим, что русский перевод византийского “Воинского зако-

на” осуществлен неизвестным автором. И, как утверждает сам издатель, данный Закон им был опубликован по “превосходной рукописи” *Marciānus 579*, содержащей в качестве приложения извлечения из Прохирона.

Однако после памятника византийского военного права обратимся к “Военному [Воинскому] закону” Нерсеса Ламбронаци, который впервые вводится в научный оборот на русском языке.

Первоисточники на армянском языке свидетельствуют, что среди правовых памятников, применявшихся в Киликийской Армении, важное место занимал и “Военный [Воинский] закон” Нерсеса Ламбронаци.

Следует отметить, что мы здесь имеем дело с нормами военного права, которые характерны для любого военного дисциплинарного устава или уголовного кодекса. Данный нормативно-правовой свод трактатов, в основном регулировавший внутреннюю жизнь киликийской армии, состоит из пяти глав различного объема, которые регламентировали отношения между воинами и главными лицами (командирами, командующими), определяли их права и обязанности. Здесь же в данном Законе большое место уделено перечню наказаний за различного рода воинские преступления.

В частности, восемь статей Закона предусматривают санкции за предательство (гл. I), пятнадцать статей – за уклонение от воинской службы и самовольное оставление поля боя (гл. II – III), двенадцать статей – за нарушение воин-

¹⁹ Стратегикон Маврикия / Сост. В. В. Кучма. СПб., 2004 (Византийская библиотека. Источники), с. 18

²⁰ Липшиц Е. Э. Очерк истории византийского общества и культуры. М. – Л., 1961, с.247, Липшиц Е. Э. Эклога. Византийский законодательный свод VIII в. / Вступ. статья, пер., комментарии. Е. Э. Липшиц. М., 1965, с.21

ского устава (гл. IV), а семнадцать статей предусматривают наказания за проступки, компрометирующие и порочащие честь воина (гл. V).

Примечательно, что византийский “Воинский закон” начинается правовой нормой, которая регулирует отношения между организованными заговорщиками и армейскими властями. Затем законодатель переходит к случаям индивидуальных правонарушений. Что касается данной статьи Закона Нерсеса Ламбронати, то она не занимает особое место среди других статей, регулирующих внутреннюю жизнь армии. В частности, она более “христианизирована”, т. к., наряду с санкцией “отсечения головы” (как это предусматривает византийский закон), предусматривает также и “изгнание из гавара” (ст. 6).

Далее, сравнительный анализ вышеупомянутых византийских и киликийских законов Нерсеса Ламбронати показывает, что византийский “Воинский закон” не содержит статей о взаимоотношениях между византийской армией и гражданским населением империи. Что же касается “Военного [Воинского] закона” Нерсеса Ламбронати, то его памятник права не ограничен статьями внутренней жизни киликийской армии. В частности, на это указывают такие правовые нормы, как ст.ст. 14, 30, 41 – 42 вышеупомянутого нормативно-правового акта.

Текстологический анализ двух первоисточников (византийского “Воинского закона” и “Военного закона” Нерсеса Ламбронати) отчетливо свидетельствует о том, что “Военный [Воинский] закон” Нерсеса Ламбронати, включая в себя,

главным образом, нормы обязательственного права, не являлся простым переводом, а соответствовал требованиям времени, среды и обстоятельств, которые сложились в Вооруженных силах Киликийской Армении. Поэтому они имели большое значение для поддержания воинской дисциплины и военного порядка в армии.

Однако, справедливости ради, заметим, что Нерсес Ламбронати в своем Законе не только воспроизводит многие концепции византийского “Воинского закона”, но и стремится учесть и защитить систему ценностей армянского воина, которая раскрыта в трудах средневековых армянских историков – Фавстоса Бузанда, Мовсеса Хоренати и мн. др.

Следующая работа Нерсеса Ламбронати – это “Новый краткий сборник законов”, который был переведен на армянский язык в 1196 г. с византийского Законодательства, с изменениями и дополнениями и с учетом политико-правовых и социально-экономических реалий киликийских армян. Вышеупомянутая рукопись “Сборника” до сих пор не издана, следовательно, и не введена в научный оборот ни на армянском и ни на русском языках.

Необходимо отметить, что изучение архивных материалов, результатов исследований армянских ученых показывают, что данный “Новый краткий сборник законов” Нерсеса Ламбронати состоит из 68 небольших статей, наряду с уголовным правом большинство из них регламентируют гражданское право и являются дополнением, как нами уже отмечано, “Гражданского закона” выше-

упомянутого автора. Данный «Сборник» примечателен тем, что содержание 56 статей включает в себя редакционную выборку гражданского и уголовного права из византийского законодательства, а 12 статей – это армянский перевод из Ветхого Завета. При этом заметим, что большинство статей по линии византийского гражданского права – это измененные и дополненные статьи из ассирийского законодательства. Нерсесом Ламбронати они переведены на армянский язык с соответствующими изменениями и дополнениями.

В целом, «Новый краткий сборник законов» Нерсеса Ламбронати содержит наряду со статьями уголовного права много статей, относящихся к наследственному праву, завещанию, брачно-семейному праву, правам и обязанностям между родителями и их детьми, родственными связям и т. д. В частности, первая статья данного «Сборника» требует, чтобы гражданское судопроизводство реализовалось не только национальным судом и на национальном языке, но и состоялось там, где живут судьи и истцы, кроме исключительных случаев.

Вместе с тем, согласно данному «Сборнику», в судебном разбирательстве женщины не могли участвовать в качестве свидетелей. Однако женщине предоставлялось право выбора мужа, а при разводах судья не имел право углубляться в их причины и мешать мужу

или жене в разводе, если они хотят создать новую семью²¹.

Интересно заметить, армянские источники, основываясь на вышеизложенном, утверждают, что содержание приведенных нами статей Нерсеса Ламбронати нельзя однозначно отнести к периоду правлений византийских императоров Льва III Исаурийского или Константина V, т. к. они имеют глубокие исторические корни²². Хотя известный филолог из венской конгрегации мхитаристов Н. Акинян считает, что Нерсес Ламбронати свой вышеупомянутый «Сборник» создал на основе перевода статей из ассирийского и частично из византийского судебныхников.

Вместе с тем, на основе сравнительного анализа статей Ветхого Завета и «Сборника» Нерсеса Ламбронати Г. Г. Акопян отмечает, что «... данный «Сборник» Нерсеса Ламбронати нельзя назвать «ассирийско-византийским», потому что большинство его статей более древние, чем статьи ассирийского и византийского судебныхников, т. к. многие из них взяты из Ветхого Завета»²³.

Существует также мнение ученых, что армянские переводы византийских законов использовались на территории Великой Армении еще при царстве Багратунидов.

Широкая и содержательная творческая деятельность Нерсеса Ламбронати оборвалась в связи с его кончиной в

²¹ Рукопись № 485 Матенадарана им. св. Месропа Маштоца (на арм. яз.), с.215

²² Акопян Г. А. Нерсес Ламбронати (жизнь и деятельность) / Отв. ред. Г. В. Абгарян. Ер.: АН Арм. ССР, 1971 (на арм. яз.), с. 321-322.

²³ Акопян Г. А. Нерсес Ламбронати (жизнь и деятельность) / Отв. ред. Г. В. Абгарян. Ер.: АН Арм. ССР, 1971 (на арм. яз.), с. 322-323.

**СВ. НЕРСЕС ЛАМБРОНАЦИ
КИЛИКИЙСКИЙ (1153 - 1198)
И ЕГО ЗАКОНЫ**

РУБЕН ОСИПОВИЧ АВАКЯН

*Доктор юридических наук, профессор,
академик Всеармянской академии
проблем национальной безопасности*

РЕЗЮМЕ

В данной статье автор на основе архивных материалов, армянских рукописей, а также работ средневековых и современных историков исследует "Гражданский" и "Воинский" законы крупнейшего духовного, государственного и общественно-церковного деятеля, богослова, ученого, философа, поэта, музыканта, переводчика и оратора Киликийской Армении Св. Нерсеса Ламбронаци.

В частности, автор статьи утверждает, что, хотя вышеупомянутые законы в киликийской действительности и не нашли широкого применения среди киликийцев, однако они, как памятники армянского права, существенно обогатили правовую мысль киликийских армян до принятия "Судебника" Смбата Спарапета (XIII в.).

Ключевые слова: *Киликийская Армения, Св. Нерсес Ламбронаци, "Гражданский закон", "Воинский закон".*

**ST. NERSES LAMBRONATSI
CILICIAN (1153 - 1198)
AND HIS LAWS**

RUBEN HOVSEP AVAGYAN

Doctor of Law, Professor, Academician of All Armenian Academy of the National Security Problems

SUMMARY

In this article the author, based on archival materials, Armenian manuscripts, as well as works of medieval and modern historians, explores the "Civil" and "Military" laws of the great spiritual, state and public-clerical figure, theologian, scientist, philosopher, poet, musician, translator and speaker of Cilician Armenia St. Nerses Lambronatsi.

Particularly the author argues that although the above-mentioned laws in the Cilician reality were not widely used among the Cilician Armenians, as monuments of Armenian law, they significantly enriched the legal thought of Cilician Armenians before adoption of the Smbat Sparapet's "Code of Law" (XIII century).

Key words: *Cilician Armenia, St. Nerses Lambronatsi, "Civil law", "Military law", Ruben Avagyan.*



ՄԱԼԻԿ ՄԻՐԱՔԻ ԹԵԼՈՒՆՑ

Իրավագետ, պատմաբան, պատմական գիտությունների թեկնածու, Գորիսի պետական համալսարանի իրավագիտության ամբիոնի վարիչ, արդարադատության առաջին դասի խորհրդական, ԵՊՀ իրավագիտության դոկտորանտ

ԱՆՁԻ ԱՆՁԵՌՆԱԽԵԼԻՈՒԹՅԱՆ ԵՎ ԸՆՏԱՆԻՔԻ ԴԵՍ ՈՒՂՂՎԱԾ ՀԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԱՅ ՀԻՆ, ՄԻՋՆԱԴԱՐՅԱՆ ԵՎ ԱՐԴԻ ՔՐԵԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՒՄ. ՀԱՄԵՄԵՏԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅԱՆ ՓՈՐՁ

Հայտնի է, որ հայկական քրեական բոլոր օրենսգրքերը, սկսած 1922թ. ընդունված Խորհրդային սոցիալիստական հանրապետության առաջին օրենսգրքից, ունեցել են անձի դեմ ուղղված հանցագործությունների վերաբերյալ առանձին գլուխներ:

Հայաստանի Հանրապետության գործող քրեական օրենսգրքում մարդու դեմ ուղղված հանցագործությունները նախատեսված են 7-րդ բաժնի 16-20-րդ գլուխներում: 16-րդ գլուխը կրում է «Կյանքի և առողջության դեմ ուղղված հանցագործություններ» վերնագիրը՝ նախատեսելով սպանության, մարմնական վնասվածքներ հասցնելու և այլ հանցակազմեր, 17-րդ գլուխը վերաբերվում է «Անձի ազատության, պատվի և արժանապատվության դեմ ուղղված հանցագործություններին»՝ նախատեսելով մարդուն առևանգելու, թրաֆիքինգի և այլ հանցակազմեր: 18-րդ գլուխը վերաբերում է՝ «Սեռական անձեռնմխելիության և սեռական ազատության» դեմ ուղղված հանցագործություններին՝ նախատեսելով բռնաբարության, բռնի կերպով սեք-

սուալ բնույթի գործողություններ կատարելու և այլ հանցակազմեր: 19-րդ գլուխը վերաբերվում է «Մարդու և քաղաքացու սահմանադրական իրավունքների և ազատությունների» քրեաիրավական պաշտպանությանը՝ նախատեսելով պատասխանատվություն մարդու և քաղաքացու իրավահավասարության, ընտրական իրավունքի, հաղորդակցման գաղտնիության, բնակարանի անձեռնմխելիության խախտման և մարդու իրավունքների և ազատությունների մի շարք այլ խախտումների համար: 20-րդ գլուխը վերաբերվում է «Ընտանիքի և երեխայի շահերի» դեմ ուղղված հանցագործություններին՝ անչափահասին հանցանքի կատարմանը, պոռնկության մեջ ներգրավելուն և այլ հանցակազմեր:

Սույն հոդվածը համեմատական վերլուծության մի փորձ է հայ հի՛ն, միջնադարյան եվ արդի քրեական իրավունքում անձի անձեռնմխելիության և ընտանիքի պաշտպանության քրեաիրավական կարգավորումների զարգացման գործընթացների, պատ-

մախրավական օրինաչափությունների վերաբերյալ:

Անձի դեմ ուղղված շատ արարքներ՝ այդ թվում անձոնմխելիության, ընտանիքի դեմ ուղղված գործողություններ, արգելված են եղել դեռևս հնագույն շրջանի օրենքներով՝ սկսած Աքքադից, Շումերից, Եգիպտոսից, Բաբելոնից ևն: Հայ իրավունքի հուշարձաններից նշված ոլորտի իրավահարաբերությունների իրավակարգավորումներ կան Ասորահռոմեական Դատաստանագրքում, «Կանոնագիրք Հայոց»-ում, հետագայում նաև՝ Մխիթար Գոշի (12-րդ դար), Սմբատ Սպարապետի (13-րդ դար) դատաստանագրքերում, ավելի ուշ՝ նաև Ասորախանի Հայոց Դատաստանագրքում (18-րդ դար), «Որոգայթ Փառաց»-ում (18-րդ դար) ևն:

Անձի դեմ ուղղված հանցագործություններից ամենածանրն անկասկած սպանությունն է և միանգամայն իրավացի են այն հեղինակները, ովքեր գտնում են, որ հենց սպանության գնահատմամբ է ծագել արդի քրեական իրավունքի հիմնական հասկացություններից հանցակազմի հասկացությունն իր հիմնական տարրերով՝ օբյեկտ, օբյեկտիվ կողմ, սուբյեկտ, սուբյեկտիվ կողմ¹: «Եթե որեւէ մարդ հարուածի մէկին եւ սա մահանայ, ապա հարուածողը մահապատժի թող ենթարկուի»², սահմանված է եղել Հին

Կտակարանում: Խոսքն, անշուշտ, դիտավորյալ սպանության մասին է: Իսկ եթե սպանությունը կատարվել է ոչ սպանողի կամքով, որի տակ պետք է հասկանալ անզգույշ, կամ ինչպես Մխիթար Գոշն է նշում՝ ակամա սպանությունը, այդ դեպքում՝ Հին Կտակարանը այդպիսի անձին հնարավորություն է տալիս մեկ այլ վայրում ապաստան գտնել³:

Մխիթար Գոշը և Սմբատ Սպարապետը առանձնացնում են դիտավորյալ՝ «կամա» կամ «կամավոր» և «ակամա» անզգույշ սպանությունները: Ընդ որում, անտեսելով օրենքի առջև բոլորի իրավահավասարության սկզբունքը՝ այլադավանի կողմից քրիստոնյային դիտավորյալ սպանելու դեպքում նախատեսվում է մահապատիժ, իսկ անզգույշությամբ կյանքից զրկելու դեպքում՝ ձեռքերի հատում և արյան գնի վճարում, իսկ քրիստոնյայի կողմից դիտավորյալ այլադավանին սպանելու դեպքում՝ արյան գնի վճարում, անզգույշ սպանության դեպքում՝ արյան կես գնի վճարում ևն:

Քրիստոնյայի կողմից քրիստոնյային դիտավորյալ սպանելու դեպքում՝ նախատեսվել է տուգանք և ձեռքի հատում, իսկ ակամա՝ անզգույշ սպանության դեպքում՝ սահմանվել է արյան գնի վճարում սպանվածի մերձավորներին և տուգանքի վճարում՝ թագավորին⁴:

¹ օր.՝ Ա.Թ. Թովմասյան, Հին և Միջնադարյան հայ քրեական իրավունք, ԵՊՀ հրատ., Երևան, 1977, էջ 121-122

² Ելք 21:12, Աստուածաշունչ: Մատեան Հին եւ Նոր կտակարանների, Հրատարակութիւն Մայր աթոռ Ս. Էջմիածնի եւ Հայաստանի Աստուածաշնչային ընկերութեան, Երևան, 2001,: Հետագա սուրբգրային բոլոր հղումները ևս կատարված են այս հրատարակությունից:

³ Ելք 21:13:

⁴ Տես Ռուբեն Ավագյան, Հայ իրավական մտքի գանձարան, հ 1, Ե. 2001, էջ 395:

Ըստ Գոշի՝ դիտավորյալ սպանություն է, օրինակ՝ երբ կինը, դեղ խմեցնելով սպանում է ամուսնուն, կամ կացինը նետում է մեկի վրա՝ հարվածի ուժգնությունը հաշվի չառնելով, կամ գավազանահարում մեկին՝ ուղղելու նպատակով, բայց վերջինս մեռնում է: Այս վերջին դեպքում, օրինակ՝ կարելի է խոսել անուղղակի դիտավորությամբ կատարված արարքի մասին: Անզգույշ է դիտվում այն արարքը, երբ, օրինակ՝ փայտ կտրելիս կացինը կտրողի ձեռքից դուրս է ուստնում և հարվածելով մահ պատճառում մեկ ուրիշի կամ որսին նետահարելիս նետը կպնում է որևէ մեկին ու սպանում, կամ քարը նետում են ծառից միրգ թափելու համար, բայց այն դիպչում է մեկին և մահ պատճառում⁵:

Սմբատ Սպարապետի Դատաստանագիրքը դիտավորյալ սպանության համար մահապատիժ է սահմանում⁶:

Թե՛ Մխիթար Գոշը և թե՛ Սմբատ Սպարապետը անհրաժեշտ պաշտպանության սահմաններում կատարված սպանությունները քրեորեն պատժելի չեն համարում: Սմբատ Սպարապետը նույնիսկ խրախուսելի է համարում դա: Ուշագրավ է Սմբատ Սպարապետի դատաստանագրքի 92-րդ հոդվածը, ըստ որի, եթե տղամարդը իր տանը «բռնի» կնոջը օտար տղա-

մարդու հետ և երկուսին էլ սպանի, նա պատժի ենթակա չէ: Իսկ եթե նրանցից միայն մեկին սպանի՝ մահապարտ է, որովհետև վերջին դեպքում կարելի է մտածել, որ նա կամ օտար տղամարդու միջոցով փորձել է ազատվել իր կնոջից, կամ կնոջ միջոցով՝ «օտար» տղամարդուց⁷:

Դատաստանագրքերը նախատեսում են նաև սպանության առանձին տեսակներ, օրինակ՝ Գոշի Դատաստանագրքի 51-րդ հոդվածը մահապատիժ է սահմանում այն կնոջ՝ մոր համար, ով իր երեխային կսպանի վերջինս խեղանդամ կամ արտամուսնական կապից ծնված լինելու պատճառով⁸: Կանոնական օրենքներում սպանություն էր համարվում նաև աբորտը և ինքնաաբորտը (Կոստանդնուպոլսի 629թ. եկեղեցական ժողով): Դավիթ Ալավկատրդու (11-12-րդ դարեր) կանոններում՝ հոդ. 48, աբորտ էր համարվում երեխային փորի մեջ դեղով կամ ճմլելով սպանելը. «Եթե ոք մարդ լինի սպանեալ, կամ մատնեալ, կամ այրեցողութիւն խորհեալ, կամ կին զտղայ ի փորին սպանանէ դեղով կամ կոխելով կամ զորմով անկանելով...» նն, հավասարեցվում էր սպանությանը⁹:

Եկեղեցին դատապարտում էր աբորտը, քանզի արգանդում սերմանված սաղմն Աստվածային կամքով է

⁵ Տես՝ նույն տեղում էջ 517-518, տես նաև Մխիթար Գոշի դատաստանագիրք հայոց: Իրաւաբանական հետազոտութիւնք հանդերձ ծանոթութեամբ Վահան ծ. Վարդապետի Բաստամեան, Ի Վաղարշապատ, 1880, էջ 426-429:

⁶ Տես՝ Ռուբեն Ավագյան, Հայ իրավական մտքի գանձարան, հ 1, էջ 635-636:

⁷ Տես՝ նույն տեղում, էջ 607, տես նաև՝ Դատաստանագիրք Սմբատ իշխանի (Գունդստաբլի):

⁸ Տես՝ Ռուբեն Ավագյան, Հայ իրավական մտքի գանձարան, հ 1, էջ 410:

⁹ Տես՝ Ա.Թ. Թովմասյան, Հին և Միջնադարյան հայ քրեական իրավունք, ԵՊՀ հրատ., Երևան, 1977, էջ 196:

հոգի առնում, ուստի նրա ոչնչացումը հավասարվում էր մարդու կյանքի նկատմամբ ոտնձգությանը¹⁰:

Գործող ՀՀ քրեական օրենսգրքով հանցագործություն է համարվում մոր կողմից ծննդաբերության ժամանակ կամ երեխայի ծնվելուց անմիջապես հետո, ինչպես նաև ՀՀ քր. օր. հոդված 106-ում նշված մյուս հանգամանքներում նորածին երեխայի սպանությունը¹¹: Օրենսգրքի 122-րդ հոդվածի համաձայն, ապօրինաբար աբորտ կատարելու հանցակազմի սուբյեկտ չի կարող լինել կինը, որն ինքնաաբորտ է կատարում կամ որին բժիշկները կամ օրենքում նշված մյուս անձիք աբորտի՝ արհեստական վիժման են ենթարկում: Ըստ էության, մոր արգանդում գտնվող, չծնված երեխային կյանքից զրկելը, օրենսդիրը մոր կողմից սպանություն չի համարում, այլ՝ հղիության ընդհատում, լինի դա ապօրինի թե՛ ոչ ապօրինի: Այդ պատճառով էլ իր հղիությունն ընդհատող կինը գործող օրենսդրությամբ, իր դեռևս չծնված երեխայի սպանության, օրենսդրի տերմինաբանությամբ՝ աբորտի համար պատասխանատվության ենթակա չէ: Միայն երկուների սկսվելուց հետո է օրենսդիրը պաշտպանության տակ առնում նոր ծնվող երեխայի կյանքը և այդ կյանքի նկատմամբ ոտնձգությունը ճանաչում որպես սպանություն¹²: Այսպիսին է

ժամանակակից քրեական իրավունքի մոտեցումը: Մինչդեռ, ինչպես տեսանք, դեռևս եկեղեցական իրավունքը, օրինակ՝ Դավիթ Ալավկատրդու կանոններում, ինքնաաբորտը ևս հանցանք է դիտել՝ այդպիսի արարք կատարած կնոջը ճանաչելով քրեական պատասխանատվության սուբյեկտ: Ուշագրավ է, որ Խորհրդային Հայաստանի 1927թ. նոյեմբերին ընդունված՝ 1942թ. նոյեմբերի 1-ի դրությամբ փոփոխություններով քրեական օրենսգրքի 166-րդ հոդվածը աբորտը թույլատրում է՝ եթե հղիությունը վտանգ է ներկայացնում կնոջ կյանքի համար կամ սպառնում նրա առողջությանը, ինչպես նաև՝ եթե առկա է ծնողներից ժառանգաբար անցնող ծանր հիվանդություն: Օրենսգրքի 166-րդ հոդվածը քրեական պատասխանատվություն է սահմանում նաև հղի կնոջ համար, եթե նա վերը նշված հանգամանքների բացակայության պայմաններում աբորտ է կատարել¹³: Ապօրինի է դիտվում նաև ոչ հիվանդանոցային պայմաններում աբորտ կատարելը:

Մեր կարծիքով, եթե հղիության 12-րդ շաբաթից հետո հղի կինը գիտենալով, որ բնականոն ձևավորվող երեխան օրինակ՝ աղջիկ է և ոչ իրեն ցանկալի տղա, կամ հակառակը և կամ մեկ այլ շարժառիթով մինչև երեխայի ծնվելը աբորտ է կատարում և պտուղը

¹⁰Նույն տեղում:

¹¹ Այդ հանգամանքներն են՝ ծննդաբերության կամ դրանից անմիջապես հետո ընկած ժամանակահատվածը, ինչպես նաև հոգեճնշող վիճակը կամ մեղսունակությունը չբացառող հոգեկան խանգարման վիճակը:

¹²Արամ Թամազյան, Մպանությունների ընդհանուր բնութագիրը, տեսակները և որակման առանձնահատկությունները, «Տոներ» հրատ., Երևան, 2005, էջ 224:

¹³ Տե՛ս ՀՍՍՀ քրեական օրենսգիրք, Հայպետհրատ, Երևան, 1942, էջ 122:

ռչնչացնում, ապա նրա արարքը պետք է դիտարկել որպես քրեորեն պատժելի: Նկատենք նաև, որ ՀԽՍՀ 1927թ.՝ քրեական օրենսգրքի 166^ա հոդվածը պատասխանատվություն է նախատեսում նաև կնոջն աբորտ կատարելուն հարկադրելու համար, մինչդեռ գործող ՀՀ քրեական օրենսգիրքը նման հանցակազմ չի սահմանում: Գտնում ենք, որ սա օրենսդրական էական բացթողում է, քանի որ ժամանակակից հասարակական, ամուսնաընտանեկան հարաբերություններում տարբեր շարժառիթներով կնոջը կարող են հակել, հարկադրել, առանց օբյեկտիվ հիմքերի աբորտ կատարելու, որն, ի դեպ, կարող է նաև լուրջ վնաս պատճառել կնոջ առողջությանը: Ուստի, քրեական օրենսգիրքը պետք է լրացնել նոր հոդվածով, օրինակ՝ 122.1 «Կնոջը աբորտ կատարելուն հակելը կամ հարկադրելը»:

«Աստրախանի հայոց դատաստանագրքի» (1765թ.) 464-րդ հոդվածը սպանության համար մահապատիժ է սահմանում. «Ամեն ոք, ով սպանում է տղամարդու կամ կնոջ, պատանու կամ մանկան՝ մահապատիժ է ենթարկվում»¹⁴: Համանման պատիժ է սահմանվում սպանության համար նաև «Որոգայթ փառաց»-ում (18-րդ դարի 70-80-ական թթ.), որի ՆԿԴ (464) հոդվածը սահմանում է. «Ամենայն ոք որ սպանցե այր կամ կին, մանուկ կամ

երեխայ և որում չափի և որում հասակի որ իցե բնութին մարդոյ մահու մեռցի»¹⁵:

Ինչպես Մխիթար Գոշի, Սմբատ Սպարապետի դատաստանագրքերը, «Դատաստանագիրք Աստրախանի Հայոց»-ը, և «Որոգայթ փառաց»-ը անհրաժեշտ պաշտպանության սահմաններում կատարված սպանության համար քրեական պատասխանատվություն չեն սահմանում¹⁶:

Աստրախանի հայոց դատաստանագիրքը և «Որոգայթ փառաց»-ը աներկմտորեն մահապատիժ են նախատեսում բռնաբարության և արվամոլության՝ համաստեամոլության համար: «Դատաստանագիրք Աստրախանի Հայոց»-ի 12-րդ հոդվածը, օրինակ՝ սահմանում է. «Եթե մեկը հանդգնի աղջիկ, ամուսնացած կամ այրի կին փախցնել և բռնությամբ նրա վրա գարշելի շնության գործ կատարել. երբ հայտնի դառնա և քննությամբ հաստատվի՝ թող կտրեն նրա գլուխն առանց ներողամտության, իսկ բռնությամբ պղծվածները չպատժվեն, քանի որ իրենց կամքով չի եղել»: Հընթացս նկատենք, որ նույն դատաստանագիրքը խիստ պատիժներ է նախատեսում ամուսնաընտանեկան կամ ընտանեկան բարոյականության, ողջախոհության կամ սեռական ողջախոհության բնագավառի այսօր էլ անբարոյական (բայց քրեորեն

¹⁴ Ռուբեն Ավագյան, նշվ. աշխ., հ.1, էջ 176, նաև՝ «Դատաստանագիրք Աստրախանի Հայոց», աշխատասիրությամբ Ֆ. Դ. Պողոսյանի, ՀՍՍՀ ԳԱ հրատ., Երևան, 1967:

¹⁵ Գիրք անուանեալ «Որոգայթ փառաց», Էլեքտրատպարան Աղանեանի, Թիֆլիս, 1913, էջ 382, «Որոգայթ փառաց»-ի՝ ըստ իրավունքի ճյուղերի, այդ թվում քրեական իրավունքի նորմերի համակարգված աղյուսակները տես Մ.Մ. Թելունց, Հայ ազգային-ազատագրական շարժումը XVIII դարի երկրորդ կեսին և իրավաբաղադրական միտքը, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., Երևան, 1995:

¹⁶ Տես՝ Աստրախանի հայոց դատաստանագրքի հոդվ. 52, «Որոգայթ փառաց» հոդվ. ԶՂԱ (191):

անպատժելի) արարքների համար: Օրինակ՝ հոդված 13. «Երբ մեկը, իրենից վանելով Աստվածային երկյուղը, հանդգնի շնություն կատարել իր ծնող մոր կամ իր դստեր նկատմամբ, կամ իր թոռան նկատմամբ, կամ իր տատի նկատմամբ, կամ իր քրոջ նկատմամբ, կամ իր քրոջ դստեր նկատմամբ. երբ հայտնի դառնա և քննությամբ հաստատվի՝ թող առանց ներողամտության այրեն նրան»¹⁷: Կամ 14-րդ հոդվածը՝ «Եթե որևէ մեկը հանդգնի շնանալ իր խորթ մոր, եղբոր կնոջ, կամ իր հորեղբոր և հորաքրոջ դուստրերի, կամ հորեղբոր կնոջ, կամ հորաքրոջ կամ մորաքրոջ, կամ իր մորեղբոր և մորաքրոջ դուստրերի, կամ իր խորթ դստեր, կամ իր քեռակնոջ, կամ սրանց նման այլ ազգականների հետ, որոնց օրենքով արգելվում է ամուսնանալ միմյանց հետ. և երբ հայտնի դառնա և քննությամբ պարզվի՝ պետք է նրա քիթը կտրել և ցմահ շղթայակապ անել»¹⁸: Կամ՝ 16-րդ հոդվածը՝ «Եթե կինն ամուսնու կենդանության ժամանակ շնանա իր ծառայի հետ, թող կտրեն կնոջ գլուխը, իսկ ծառային այրեն»¹⁹: Դատաստանագիրքը (հոդված 92) մահապատիժ է սահմանում բռնի համասեռամոլության՝ արվամոլության համար: Դատաստանագիրքը աբորտի մասին հատուկ հոդված չունի, սակայն նրա մի շարք հոդվածներից երևում է, որ ընդհանրապես

այն բացառվում է, կամ ենթադրվում է, որ այն բացառվում է: Մանկապանությունը, ինչպես և մյուս դիտավորյալ սպանությունները ծանր հանցանք են համարվում և պատժվում մահապատժով: Ըստ դատաստանագրքի 64-րդ հոդվածի՝ նույնիսկ արտաամուսնական կապից՝ շնությունից ծնված երեխային սպանելը պատժվում է մահապատժով: «Որոգայթ Փառաց»-ի ՆԿԵ (465) հոդվածը մահապատիժ է նախատեսում բռնաբարության համար. «Ամենայն ոք որ բռնադատությամբ լլկեսցի և խայտառակեսցի ամուսացեալ կնոջ և դստեր - կոյս մահու մեռցի»²⁰: Իսկ «Որոգայթ Փառաց»-ի ՆՀԵ 475 հոդվածը համասեռամոլության՝ արվամոլության համար սահմանում է. «Ամենայն ոք արու ի բնութիւնս մարդոյ խառնակցեալ ընդ արուի, և ընդ գազանի և անասնոյ խառնակողն և խառնակցեալն ի միջի հրոյ այրեսցի»²¹: Նկատենք, որ որպես կանոն «Որոգայթ Փառացը» և իրավունքի մյուս հուշարձանները արվամոլությունը և անասնամոլությունը հակաբարոյական ու քրեորեն պատժելի արարք են համարում: Ի դեպ՝ արտաամուսնական կապերը՝ շնությունը, արվամոլությունը, անասնամոլությունը, պոռնկությունը, բոգությունը, ինչպես դա անվանում են իրավունքի մեր հին հուշարձանները, ոչ միայն ամուսնալուծության՝ եկեղեցու կողմից,

¹⁷ Տե՛ս՝ «Հայ իրավական մտքի զանձարան», հ 2, էջ 316:

¹⁸ Տե՛ս՝ նույն տեղում:

¹⁹ Նույն տեղում, էջ 317:

²⁰ «Որոգայթ փառաց...», էջ 383:

²¹ Նույն տեղում, էջ 385:

անքակտելի, անբաժանելի՝ Աստվածային ճանաչված սրբազան միության լուծարման անառարկելի հիմքեր են, այլև իրավունքի մի շարք հուշարձաններում այդպիսի արարք թույլ տված կնոջ դիտավորյալ սպանությունը համարում են օրինական: Լեսբիականության (կնոջ սեքսուալ բնույթի հարաբերությունները կնոջ հետ) վերաբերյալ ակնարկներ մենք չհանդիպեցինք հայ իրավունքի պատմական հուշարձաններում: Համասեռամոլության՝ արվամոլության մասին Աստվածաշնչյան այն պահանջը, որ. «Եթե որևէ տղամարդ մի այլ տղամարդու հետ պառկի, ինչպես կնոջ հետ, նրանք պղծութիւն գործած կը լինեն: Երկուսն էլ մահուան թող դատապարտուեն...»²², որպես կանոն, պահպանվել է հայ իրավունքի հուշարձաններում: Այս առնչությամբ, ըստ երևույթին, հարկ կա վերստին անդրադառնալու ՀՀ գործող քրեական օրենսգրքին: Եվրոպայի խորհրդին միանալու (2001թ.) առնչությամբ ՀՀ դիմումը քննարկելու մասին N221 կարծիքում՝ Եվրոպայի խորհրդի խորհրդարանական վեհաժողովի առաջարկությունների թվում եղել է. «...դե յուրե կվերացվի մահապատիժը և կապաքրեականացվեն չափահաս անձանց կամավոր սեքսուալ կապերը»՝ որպես «եվրոպական ընտանիք» ընդունվելու նախապայման²³: Այդ հիմքի վրա, 2003թ. ապրիլի 18-ին ընդունված և նույն թվականի օգոստոսի 1-ից կիրառության մեջ

դրված ՀՀ քրեական օրենսգիրքն, ի հեճուկս 1961թ. խորհրդային քրեական օրենսգրքի, որը մերժում էր համասեռամոլության ցանկացած «կամա» թե «ակամա»՝ կամավոր թե բռնի դրսևորում,²⁴ փաստորեն օրինականացրեց հայ ազգային-պատմական արժեքներին անհարիր կամավոր համասեռամոլությունը: Գործող քրեական օրենսգրքի (Երևան, 2014), 141-րդ հոդվածը միանգամայն թույլատրելի է համարում սեքսուալ (sex –լատ. սեռ, sexualis – սեռական) բնույթի գործողությունները, եթե դրանք չեն կատարվել ակնհայտ 16 տարին չլրացած անձի հետ. «Հոդված 141. Սեքսուալ բնույթի գործողություններ կատարելը տասնվեց տարին չլրացած անձի հետ. տասնութ տարին լրացած անձի կողմից սեռական հարաբերությունը կամ սեքսուալ բնույթի գործողությունները ակնհայտ տասնվեց տարին չլրացած անձի հետ՝ սույն օրենսգրքի 138 (բռնաբարություն, 139 սեքսուալ բնույթի գործողություններ հողվածներով և 140 հողվածի երկրորդ մասով՝ սեքսուալ բնույթի գործողությունների հատկանիշների բացակայությամբ) պատժվում է տուգանքով՝ նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկից երկուհարյուրհիսնապատիկի չափով, կամ ազատազրկմամբ՝ առավելագույնը երկու տարի ժամկետով»: Հոդվածի նկարագրությունից ակնհայտ է, որ նշված արգելքներից դուրս սեռական կամ սեքսուալ բնույթի այլ ոչ բռնի հարաբերությունները

²² Աստուածաշունչ մատեան հին ու նոր կտակարանների, Էջմիածին, 2001, Ղև 20:13:

²³ Տես՝ Ուսումնասիրություն Հայաստանի Հանրապետության իրավունքի՝ մարդու իրավունքների Եվրոպական կոնվենցիայի պահանջների համապատասխանության մասին, «Նոյան Տապան» հրատ., Երևան, 2001, էջ 467:

²⁴ Տես՝ օր. Հայկական ՍՍՀ քրեական օրենսգիրք, «Հայաստան» հրատ., Երևան 1989, հոդված 116, էջ 108:

թույլատրելի արարքներ են: Այն ավելի շուտ «խրախուսող», քան թե «արգելող» նորմ է: Գտնում ենք, որ նման իրավակարգավորումն անհարիր է հայ ինչպես ազգային-պատմական, այնպես էլ արդի սոցիալ - բարոյական, իրավական արժեհամակարգին: Մենք առաջարկում ենք՝ ՀՀ քր. օր. 141 հոդվածում նշված գործողությունները՝ առանց տարիքային չափանիշները նշելու ընդգրկել օրենսգրքի 142 հոդվածի՝ անառակաբարո գործողությունների, հանցակազմում հետևյալ ձևակերպմամբ. «Մեռական և սեքսուալ բնույթի այլ անառակաբարո գործողությունները պատժվում են...», իսկ երկրորդ մասում ավելի խիստ սանկցիա նախատեսել նույն գործողությունների համար, որոնք կկատարվեն դեռահասի կամ մանկահասակի նկատմամբ:

Մխիթար Գոշի և Սմբատ Սպարապետի դատաստանագրքերում դրա համար սահմանվում են ձեռքերի և առնանդամի հատում: Երկու օրենսգրքերն էլ բռնաբարության համար որպես պատիժ նախատեսում են առնանդամի հատում, մահապատիժ, իսկ առնանդամի համար առնանդամի և ամորձիների հատում²⁵:

Հայ իրավունքի պատմական հուշարձաններում բազմաթիվ նորմեր կան, որոնք վերաբերվում են ծեծին, մարմնական վնասվածքներ հասցնելուն:

Բավական ուշագրավ է ինքնասպանության գնահատականը. այդ

հարցում հայ իրավունքի պատմական հուշարձաններում ամրագրված գաղափարն այն էր, որ «...մարդը որպես Աստծո կողմից ստեղծված արարած ունի իր հոգին: Հոգին տվել է ինքը՝ Աստված, և Նրանից բացի ոչ ոք իրավունք չունի այն անջատել մարդու մարմնից: Այստեղից էլ՝ տրամաբանական եզրակացություն, որ կատարում էին օրենսդիրները և դատարանները. մարդասպանը, ով էլ լինի նա, ուրիշը թե իր կյանքի դեմ ոտնձգողն՝ ինքը, միևնույն է, պետք է պատժվի»²⁶:

Մխիթար Գոշն իր դատաստանագրքի եկեղեցական 74-րդ հոդվածում («Բ» խմբագրություն, «Ա» խմբագրության 165-րդ հոդվածում) սահմանում է, որ եթե ինքնասպանություն գործողը դա արել է ակամա՝ պակասամտության, տկարամտության պատճառով, ապա դա դատապարտելի չէ, եթե դա այլ անձանց հարկադրանքով է արել, իսկ եթե «խելքը տեղն էր» և ինքնասպանություն է գործել, ապա նման ինքնասպանությունը դատապարտելի է և ինքնասպանի համար պատարագ չպետք է տրվի²⁷:

Ուսումնասիրողները (Վ. Բաստամեանց, Ա. Թովմասյան և այլք) ճիշտ են նկատել, որ Գոշն իր դատաստանագրքում այդ նորմը (տես «Բ» խմբագրություն, գրաբար տեքստը) ամբողջությամբ վերցրել է Աթանաս Հայրապետի, կամ Աթանաս Ալեքսանդրացու (326-371թթ.) կանոնախմբից՝ նույնությամբ մեջբերելով նրա

²⁵ Տես Սմբատ Սպարապետի Դատաստանագիրք, հոդ. 95, 106, Մխիթար Գոշ, Դատաստանագիրք, հոդ. 28, 29,

²⁶ Տես Ա. Թ. Թովմասյան, Հին և միջնադարյան հայ քրեական իրավունք, ԵՊՀ հրատ., Երևան, 1977, էջ 147:

²⁷ Տես Ռուբեն Ավագյան, նշվ. աշխ., հ.1, էջ 463, Մխիթարայ Գոշի Դատաստանագիրք, Վաղարշապատ, 1880, էջ 174-175:

ԺԱ (11) հոդվածը²⁸: Սմբատ Սպարապետը ավելի հեռուն էր գնում: Նա ոչ միայն արգելում է մեղսունակ վիճակում ինքնասպանություն կատարած անձանց համար պատարագ մատուցելը, այլև միաժամանակ արգելում է եկեղեցական ծիսակատարությամբ նրանց, այսինքն ինքնասպանություն կատարածներին թաղելը, որն իր ժամանակին ամենածանր պատիժն էր²⁹:

Բավական «էկզոտիկ» նորմ է նախատեսում Աստրախանի Հայոց դատաստանագիրքը, որի «ԺԲ» բաժնի պատժի մասին 68-րդ հոդվածը. «Ինքնասպանության դիմողի մասին», սահմանում է. «Եթե մեկը կամենա ինքնասպան լինել և մինչև իր ցանկության կատարումն այդ մասին հայտնի դառնա և քննությամբ հաստատվի՝ կտրել նրա գլուխը, քանի որ ընդդեմ օրենքի նա ցանկացել է դա կատարել անձամբ, ուրեմն պետք է նույն պատիժը կրի այլոց կողմից: Իսկ եթե մեկն ինքնասպան լինի, նրա մարմինը թող կապեն պարանով, և դահիճը քարշ տա փողոցներում և հրապարակներում՝ նրա խայտառակության համար և հետո դուրս գցեն քաղաքից, որպեսզի կերակուր դառնա երկրի գազաններին և օդի թռչուններին, և ոչ ոք չհամարձակվի թաղել ինքնասպանի մարմինը»³⁰:

ԱՆՁԻ ԱՆՁԵՌՆՄԽԵԼԻՈՒԹՅԱՆ ԵՎ ԸՆՏԱՆԻՔԻ ԴԵՄ ՈՒՂՂՎԱԾ ՀԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԱՅ ՀԻՆ, ՄԻՋՆԱԴԱՐՑԱՆ ԵՎ ԱՐԴԻ ՔՐԵԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՒՄ.

ՀԱՄԵՄԵՏԱԿԱՆ

ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅԱՆ ՓՈՐՁ

ՄԱԼԻԿ ՄԻՐԱՔԻ ԹԵԼՈՒՆՑ

Իրավագետ, պատմաբան, պատմական գ.թ., Գորիսի պետական համալսարանի իրավագիտության ամբիոնի վարիչ, արդարադատության 1-ին դասի խորհրդական, ԵՊՀ իրավագիտության դոկտորանտ

ԱՄՓՈՓՈՒՄ

Հոդվածում քննարկվում են անձի անձեռնմխելիության և ընտանիքի դեմ ուղղված հանցագործությունները հայ հին, միջնադարյան և արդի քրեական իրավունքում, պատմաիրավական, համեմատական զուգահեռներ անցկացնելով տարբեր ժամանակաշրջանների քրեաիրավական նորմերի միջև: Հեղինակը քննարկում է գործող ՀՀ քրեական օրենսգրքի՝ նշված ոլորտի իրավակարգավորումների ներգործությունը ընտանիքի, ազգային – պատմական, սոցիալ – բարոյական, իրավական արժեհամակարգի վրա և հիմնավորում գործող քրեաիրավական օրենսդրության կատարելագործմանն ուղղված իր որոշակի առաջարկությունները:

Բանալի բառեր. անձի անձեռնմխելիություն, ընտանիքի դեմ ուղղված հանցագործություններ, Մխիթար Գոշի Դատաստանագիրք, սպանություն, ինքնասպանություն:

²⁸ Տես նաև Կանոնագիրք հայոց, Գիրք Ա, ՍՍՀ ԳԱ հրատ., Երևան, 1964 էջ 295, Մխիթարայ Գոշի Դատաստանագիրք Հայոց, Վաղարշապատ 1880, էջ 174-175:

²⁹ Ա. Թ. Թովմասյան, նշվ. աշխ. էջ 149, տես նաև Ռուբեն Ավագյան, նշվ. աշխ., էջ 617:

³⁰ Ռուբեն Ավագյան, նշվ. աշխ., հ. 2, էջ 325-326:

**ПРЕСТУПЛЕНИЯ ПРОТИВ
НЕПРИКОСНОВЕННОСТИ ЛИЧ-
НОСТИ И СЕМЬИ В ДРЕВНЕМ,
СРЕДНЕВЕКОВОМ И СОВРЕ-
МЕННОМ АРМЯНСКОМ УГО-
ЛОВНОМ ПРАВЕ: ОПЫТ СРАВ-
НИТЕЛЬНОГО АНАЛИЗА**

МАЛИК МИРАКОВИЧ ТЕЛУНЦ

*Правовед, историк, кандидат исто-
рических наук, докторант кафед-ры
Теории и истории государства и права
юридического факультета Ере-
ванского государственного универ-
ситета, советник юстиции первого
класса, зав. кафедрой «Правоведения»
Горисского государственного универ-
ситета:*

РЕЗЮМЕ

В статье обсуждаются преступления против неприкосновенности личности и семьи в древнем, средневековом и современном армянском уголовном праве, проводя историко-правовые, сравнительные параллели между уголовно-правовыми нормами разных периодов. Автор обсуждает влияние упомянутого правового урегулирования действующего Уголовного кодекса Республики Армения на семейную, национально-историческую, социально-моральную, правовую систему ценностей и обосновывает свои конкретные рекомендации по совершенствованию существующего уголовного законодательства.

Ключевые слов: *неприкос-новен-
ность личности, преступления против
семьи, Судебник Мхитара Гоша, Су-
дебник Смбата Спарапета, убийство,
самоубийство.*

**CRIMES AGAINST PERSONAL
INVIOABILITY OF INDIVIDUAL
AND FAMILY IN THE ANCIENT,
MEDIEVAL AND MODERN ARME-
NIAN CRIMINAL LAW: AN EXPE-
RIENCE OF COMPARATIVE
ANALYSIS**

MALIK MIRAK TELUNTS

*Historian, Candidate of Historical Sci-
ences, Head of the Department of
Law of Goris State University, First class jus-
tice adviser, doctoral student of
the Department of Theory and History of
State and Law of the Faculty of Law of the
Yerevan State University:*

SUMMARY

The article discusses crimes against the inviolability of individual and family in the ancient, medieval and modern Armenian Criminal law, conducting historical and legal, comparative parallels between the criminal norms of different periods. The author discusses the impact of the mentioned legal regulations of the current Criminal Code of the Republic of Armenia on the family, national historical, socio-moral, legal system of values and justifies his specific recommendations for improving the current criminal legislation.

Key words: *inviolability of individual,
crimes against the family, the code of law
of Mkhitar Gosh, the code of law of Smbat
Sparapet, murder, suicide.*



ՌՈՒԲԵՆ ՎԱԶԱԳԱՆԻ ՊԱՐՄԱՍՅԱՆ

*Պատմաբան, Հայաստանի ժողովրդական
միության անդամ, Հայաստանի Ազգային
ազդարարային համալսարանի ավագ դասախոս*

ԹՈՒՐԲԱԿԱՆ ՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ԾՐԱԳՐՈՂ ԵՎ ԿԱԶՄԱԿԵՐՊԻՉ. ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ ԸՍՏ ՍՈՂՈՍՈՆ ԹԵՀԼԵՐՑԱՆԻ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՆՅՈՒԹԵՐԻ. (ԲԵՌԼԻՆ, 2-3 ՀՈՒՆԻՍԻ, 1921թ.)¹

1948թ. դեկտեմբերի 9-ին ՄԱԿ-ի ընդունած «Ցեղասպանության հանցագործությունը կանխելու և դրա պատժի մասին» բացառիկ նշանակության կոնվենցիան ցեղասպանությունն ընդունել է որպես մարդու և մարդկության դեմ ուղղված ծանրագույն, վաղեմության ժամկետ չճանաչող հանցագործություն:

Նմանատիպ ոճրագործությունների համար 20-րդ դարում նախադեպ է դարձել 1894-1923 թթ. հայ բնակչության նկատմամբ իր իսկ բնօրրանում և Թուրքիայի այլ հայաշատ վայրերում իրականացված ցեղասպանությունը, արաբ պատմաբան Մուսա Պրենսի դիպուկ բնութագրմամբ՝ Արմենոցիդը: Ցեղասպանություն (գենոցիդ) գիտական եզրը հայտնաբերել և շրջանա-

ռության մեջ է դրել հրեա Ռաֆայել Լեմկենը:^{*} Այդ կարևոր և տարողունակ գիտական եզրը հայտնաբերելուն հրեա մասնագետին օգնել է նրա ներկա գտնվելը հայ հայրենասեր Սողոմոն Թեհլերյանի դատավարությանը: Այդ իսկ իմաստով Թեհլերյանի դատավարության նյութերը բավականին արժեքավոր են: Նախ, որպես կարևոր հանգամանք, նշենք այն, որ դատավարությունը ժամանակագրական առումով տեղավորվում է 20-րդ դարասկզբին առաջին գենոցիդի՝ Հայոց ցեղասպանության, այդ շրջանում դեռևս շարունակվող գործընթացում: Երկրորդ. ցեղասպանությանն անմիջականորեն առնչվող փաստերն ու անաչառ գնահատականները բացառիկ լույս են սփռում կատարված

¹ Սողոմոն Թեհլերյանի դատավարությունը: Սղագր. նյութեր-Ե., 1990, էջ 224: Առաջին անգամ լույս է տեսել 1921 թ. Վիեննայում, Միլիթարյան տպարանում «Դատավարություն Թալէաթ փաշայի սղագրական գեկույցում» վերնագրով: Սղագրության նախաբանը գրել է նիստերին մասնակցած հումանիստ Արմին Վեգները:

^{*} Լեմկեն Ռաֆայել (1900-1959 թթ.), - միջազգային իրավունքի մասնագետ, իրավաբան Լվովից, ծագումով հրեա:

հանցագործության բազմաթիվ ասպեկտների վրա, օտար դատարանի օգնությամբ վեր հանում հակամարդկային երևույթի շարժառիթները, հանցագործության իրականացման մեխանիզմները, դրանում թուրքական պետության շահագրգռվածությունն ու մեղավորությունը, ուղղորդող դերն ու հեռահար նպատակները, մերկացնում են պանթուրքիզմը՝ իր կոնկրետ դրսևորման մեջ: Դատավարության նյութերը մերկացնում են ինչպես Օսմանյան տերության ոճրագործ քայլերն ու նպատակները, այնպես էլ Անտանտի երկրների ոչ նվազ հանցավորությունն այս խնդրի հետ կապված, ընդգծում Գերմանիայի մեղսակցությունը: Թուրքական ժըխտողականության դեմ պայքարում արժեքավոր է առանձնապես աստվածաբանության դոկտոր Յոհաննես Լեփսիուսի ելույթը: Պատմական գիտության համար արժեքավոր են նաև դատավարության մյուս բոլոր նյութերը, վկաների ու դատապաշտպանների ելույթները: Թեհլերյանի դատավարության սույն նյութերը, սակայն, գրեթե չեն լուսաբանված, մինչդեռ դրանք մեզ՝ ուսումնասիրողներին, ցեղասպանագետներին, առհասարակ, օգնում են տեսնելու կատարված հանցագործությունն իր բոլոր պատճառահետևանքային կապերի մեջ, տեսնելու թուրքական պետության նպատակներն ու դերը, պատկերացնելու նրա պատասխանատվությունը ամբողջ մի ժողովրդի

հայրենագրկելու ու ոչնչացնելու հարցերում: Դատավարության տղազրույունն արտացոլում է գերմանական դատարանի անաչառ, սկզբունքային աշխատանքը: Դատավարության նյութերն, այսպիսով, շառաչուն ապտակ են թուրքական կեղծարարությանն ու ժխտողականությանը: Այն կռվանների, անողոք, ոչ շինծու փաստերի դեմ, որ ներկայացվել են դատավարության ընթացքում, անգոր է անգամ թուրքական կեղծարար, աճպարարության դարերով փորձարկված զինանոցը: 1921թ. մարտի 15-ին Բեռլինում Թեհլերյանի ձեռքով սպանված ռազմական հանցագործ, Թուրքիայի ներքին գործերի նախկին նախարար, Իթթիհատ վե Թերաքքի (Միություն և առաջադիմություն) կուսակցության առաջնորդներից Թալեաթի աճյունն արդեն Երկրորդ աշխարհամարտի ժամանակ արտաշիբիմել և տեղափոխել են Թուրքիա (ինչպես և Էնվերինը): Թալեաթի արձանը կանգնեցրել են Ստամբուլում ոչ նրա համար, որ երիտթուրք պարագլուխների արկածախնդրական ու ոճրագործ ներքին ու արտաքին քաղաքականության հետևանքով կործանվեց Օսմանյան կայսրությունը, այլ նրա համար, որ այսպես կոչված «Թուրանի ճանապարհը»՝ Արևելյան Անատոլիան, մաքրագործեցին հայ տարրից, հաջողվեց հայրենագրկել ու բնաջնջել Արևմտյան Հայաստանի ավտոխթոն բնակչությանը: Առաջին կարևոր հիմնահարցը, որ աչքի է զարնում դատա-

վարության նյութերում, գենոցիդի պետականորեն ծրագրված և հետևողականորեն իրականացված լինելու հանգամանքն է: Իր ելույթում իրազեկ Յոհաննես Լեփսիուսը հայտարարել է. «Ընդհանուր տեղահանությունը որոշեց երիտասարդ թուրքերի կոմիտեն, Թալեաթ փաշան՝ իբրև ներքին գործոց նախարար (մյուս կողմից նաև Էնվեր փաշան՝ իբրև պատերազմական նախարար): Տեղահանությունը, ընդհանուր աքսորը, որ որոշված էր (ընդգծ. իմն է՝ Ռ.Պ.) 1915թ. ապրիլին, վերաբերում էր Թուրքիայի ողջ հայ ժողովրդին, քիչ բացառությամբ, որը դեռ պետք է հիշատակել: Պատերազմից առաջ Թուրքիայի բնակչության մեջ կար 1.850.000 հայ (սա միայն Գրիգորյան ավերակներից էլեկտրոն դավանող հպատակներն են, - Ռ.Պ.): Բնականաբար բացարձակ ստույգ մարդահամար չկա Թուրքիայի նման մի երկրի մեջ: Հիշյալ թվերն ստանում ենք եղած վիճակագրական ատաղձից, որը համընկնում է հայ Պատրիարքարանի ազգահամարին: ...Անատոլիայի ամբողջ (հայ) բնակչությունը բարձրագույն հրամանով տեղահանվեց դեպի հյուսիսային և արևելյան եզրը՝ միջազգետքի անապատը, Դեր-Էլ-Ջոր, Ռակկա, Մեսկենե, Ռաս-Ուլ-Ային, մինչև Մոսուլ: Մոտավորապես

տեղահանվել են 1.400.000 հայեր»:² Դոկտոր Լեփսիուսն ուշադրություն է հրավիրում նաև այն փաստին, որ անգամ Կ. Պոլսի ռազմական տրիբունալն է ընդունել Թալեաթ փաշայի և ընկերների մեղսակցությունը հայկական ջարդերտեղահանությունների, ինչպես և կայսրությունը պատերազմի մեջ ներքաշելու հանցավոր որոշումներում: «Ամբաստանության 5 կետից, շեշտում է աստվածաբանության դոկտորը, - առաջինը վերաբերում էր հայոց ջարդերին»:³ Դա, անշուշտ, հանցագործություն էր մարդկության դեմ, և որի համար «Ռազմական դատարանի 6-ը հուլիսի 1919թ. վճռով մահվան դատապարտվեցին բոլոր գլխավոր հեղինակները՝ Թալեաթը, Էնվերը, Ջեմալը և դոկտոր Նազիմը»:⁴ Իսկ սա նշանակում է, որ Թեհլեյանը ոչ թե անմեղ մեկին է սպանել, այլ ոչնչացրել է պատերազմական հանցագործի, այն պետության ղեկավարներից մեկին, ով այդ հանցագործության գլխավոր կազմակերպիչներից էր: Պետության և նրա ղեկավարների մեղավորությունը փաստվում է նաև նրանով, որ պատժվում, պաշտոնից ազատվում էին այն պաշտոնյաները, ովքեր հայերի բնաջնջման հրամանը չէին կատարում, լիբերալ էին այս հարցերում կամ որևէ կերպ օգնում էին

² Տե՛ս Սողոմոն Թեհլեյանի դատավարությունը: Սղագր. նյութեր-Ե., 1990, էջ 99:

³ Տե՛ս Սողոմոն Թեհլեյանի դատավարությունը: Սղագր. նյութեր-Ե., 1990, էջ 101:

⁴ Տե՛ս Սողոմոն Թեհլեյանի դատավարությունը: Սղագր. նյութեր-Ե., 1990, էջ 101

հայերին: Նման «թերացումների» համար լուրջ պատիժներ էին նախատեսվել, ընդհուպ մինչև պաշտոնյայի տունն այրել են ու ունեցվածքը բռնագրավելը: Հալեպի վալի Ջեմալ փաշան հրամանը չկատարելու համար պաշտոնանկ է արվել և տեղափոխվել Կոնիա, ուր նույն «հանցանքում» բռնվելով՝ ընդհանրապես զրկվում է աշխատանքից: Մեկ ուրիշ վալի՝ Ռաշիդ բեյը Դիարբեքիրում սպանվում է մարդասպանների ձեռքով: Վերջիններս գայմագամ (քաղաքագլուխներ) էին և հաճույքով էին ոչնչացնում անգեն հայերին: Բռնություն էր կիրառվում բոլոր այն մահմեդականների դեմ, որոնք դժգոհում կամ չէին կատարում հայերի տեղահանման հրամանները:⁵

Երբ զանգվածային տեղահանություններն ու կոտորածները մեծ թափ էին հավաքել ու Եվրոպայի միսիոներներն ու դիվանագիտական առաքելության անդամները, պատերազմի մասնակից ու չեզոք երկրների մամուլն էին այդ մասին ահազանգում, երիտթուրք պարագլուխները արդեն իրենք էլ չէին թաքցնում կատարվող ոճրագործության իրական իմաստը: «Վարդգեսը՝ Թալեաթի մտերիմ բարեկամը,՝ ասում է Լեփսիուսը,՝ գնաց Թալեաթի մոտ հարցնելու, թե ինչ է

լինելու: Թալեաթը Վարդգեսին (թուրքական պառլամենտի՝ մեջլիսի անդամ,՝Ռ. Պ.) ասաց. «Մեր տկարության օրերին մինչև մեր կոկորդը հասաք և հայկական բարենորոգման հարցը բարձրացրեցիք, այս պատճառով մենք էլ այժմ մեզ համար ստեղծված նպաստավոր պայմաններից պիտի օգտվենք՝ ձեր ազգը այնպես ցիրուցան անելու, որ 50 տարի բարենորոգումների գաղափարը ձեր մտքից վանեք»: Վարդգեսը վրա բերեց. «Ուրեմն պետք է հասկանալ՝ շարունակել Աբդուլ Համիդի գործը»: Թալեաթը պատասխանեց. «Այո՛»:⁶ Վկայակոչելով Կ. Պոլսի ռազմական աստանի դատավարության, «Ժուռնալ օֆիսիելի» զեկույցը, Լեփսիուսը հաստատում է, որ փաստերը «շոշափելի են դարձնում... որ աքսորը որոշել են երիտթուրքերի կոմիտեն և ինքը Թալեաթ փաշան՝ կոմիտեի հոգին և նրա ամենաազդեցիկ մարդը: Նա է հրամայել բնաջնջումը գործի դնել և ոչինչ չի ձեռնարկել այն արգելելու համար»⁷: Ի հաստատումն այս եզրակացության, Լեփսիուսը հավելում է. «Մրա համար կարելի է, գերմանական և թուրքական վավերաթղթերին ապավինած, պաշտոնական գրավոր ցուցմունք բերել»:⁸

Եվ իրոք, միայն գերմանական

⁵ Տե՛ս նույն տեղում:

⁶ Տե՛ս Սողոմոն Թեհլեյանի դատավարությունը: Սղագր. նյութեր-Ե., 1990, էջ 106

⁷ Տե՛ս Սողոմոն Թեհլեյանի դատավարությունը: Սղագր. նյութեր-Ե., 1990, էջ 106:

⁸ Տե՛ս նույն տեղում:

դիվանագիտական առաքելության նյութերը (վավերագրեր, հեռագրեր, լուսանկարներ), Թուրքիայի հայաբնակ վայրերից ու տեղահանության կենտրոնատեղիներից Գերմանիայի դեսպանատան աշխատակիցների, ռազմական միսիայի և այլ աշխատակիցների ուղարկած փաստաթղթերը բավական են Հայոց Ցեղասպանությունը Օսմանյան կայսրությունում պետականորեն կազմակերպված լինելու հանգամանքն ապացուցված լինելու համար:

Թուրքական ռազմական ատյանը 1919թ-ին Անկարայի նախկին կուսակալ Մահգարի բեյի ղեկավարությամբ հավաքել և մանրագնին ստուգման է ենթարկել երիտթուրքերի գործունեության վերաբերյալ փաստաթղթերը, և երբ հաստատվել են դրանց հավաստի լինելը, դրանք մակագրվել են՝ «հաստատվել է ամբողջությամբ» ու հանձնվել դատարանին որպես փաստ:

Միլիտարիստ գրող, հրապարակախոս Արամ Անտոնյանը (1887-1952), ով Դեր-Ջորի անապատում մահվան ճիրաններից ազատված հայերից է, Թեհլերյանի դատավարությանը հրավիրվել է վկայություն տալու, դատարանին է ներկայացրել մեծ դժվարությամբ ձեռք բերված վավերագրեր, դրանց թվում Բեհաեդդին Շաքիրի երկու նամակների բնագրերը և Թալեաթի ծածկագրված հեռագրերը Հալեայի կուսակալ Մ. Աբդուլհալիգի մակագրություններով:

Նամակները գերմանական դատա-

րանին ներկայացնելուց առաջ ուղարկվել են փորձաքննության, որ Լեփսիուսի մասնակցությամբ կատարել է Գերմանիայի ՆԳՆ-ի պաշտոնյա Ռեոսլերը, 1914-18թթ-ին Հալեայում Գերմանիայի հյուպատոսն ու ջարդերի ականատեսը: Գերմանացին պատաստել է մի գաղտնի տեղեկագիր, որով հաստատել է փաստաթղթերի վավերականությունը:⁹

1919թ. նոյեմբերի 10-ին «Ստամբուլ» թերթը ևս տպել է հայերին կոտորելու մասին Թալեաթի հեռագիրը, իսկ «Թայմսը» (Լոնդոն) արտատպել է լուսանկարը և, 1919թ. հունվարի 24-ին, գրել, որ Իթթիհատի կառավարությունը ծրագրել էր մի ամբողջ ազգի բնաջնջում: Այլատյացության, այլամերժության և անհանդուրժող ազգայնականության գաղափարների դեմ ծառացող հումանիստ, քրիստոնյա պաստոր Յոհաննես Լեփսիուսը տեսնում էր նաև համաթուրքականության կոչի վտանգը, ընդգծում, որ «այսպիսի մի պետություն ստեղծելու գաղափարը, որի մեջ քրիստոնյաների համար տեղ չէր լինելու, Կոմիտեից էնվեր փաշան է հղացել»:¹⁰ Հայերը և Հայաստանը պանթուրքիստները դիտարկել են որպես լուրջ խոչընդոտ Մեծ Թուրան ստեղծելու

ճանապարհին: Քյոլնի համալսարանի իրավագիտության բաժնի պրոֆեսոր, դոկտոր Նիմայերի հարցին, թե «բալկանյան և Թուրքիայի կողմից նախապես ընկճված մյուս ազգերը հերթով ոտքի

⁹ Ս. Կ. պողոթյան «Ա. Անտոնյանի «Մեծ ոճիրը» մեղադրում է», Ե., 1990, էջ 98:

¹⁰ Տե՛ս Սողոմոն Թեհլեյանի դատավարությունը: Սղագր. նյութեր-Ե., 1990, էջ 106:107:106

էին ելել և իրենք իրենց ազատել էին թուրքական գերիշխանությունից: Արդ, որպեսզի արգելեն, որ չլինի թե հայերն էլ նույնն անեն, որոշվեց նրանց ոչնչացնել: Ճիշտ է այս տեսությունը՝ հարցին Լեփսիուսը միանշանակ պատասխան է տվել. «Այո»:¹¹ Այս հարց ու պատասխանի մեջ արտացոլված է շատ սկզբունքային մի հանգամանք, այն է՝ Թուրքիան ծրագրել և ոչնչացնում է հայերին՝ նրանց իսկ կողմից պետականություն ստեղծելու հնարավոր հեռանկարը բացառելու, հայերի հայրենիքը թուրքացնելու համար: Ընդ որում, դա երիտթուրքերի «Իթթիհադ վե Թերաքիի» կուսակցության «հայտնագործությունը» չպետք է համարել: Այն հղացվել է դեռ, որպես միջազգային քաղաքականության հարց, Հայկական հարցի ծագման տարիներին, երբ եվրոպական երկրների ճնշմամբ ու ներքին ազգային-ազատագրական շարժումների հետևանքով Բալկաններում մի շարք երկրներ, ինչպես Հունաստանը, Բուլղարիան, Սերբիան, Ռումինիան անկախություն ստացան: Թուրքական պետական և քաղաքական գործիչ Քյամիլ փաշան, ով 1884-1912 թթ. չորս անգամ նշանակվել է Մեծ վեզիր և ում գրչին է պատկանում «Օսմանյան պետության քաղաքական պատմություն» եռահատոր աշխատությունը (1909-10 թթ.), ահա ակնհայտ շովինիստական հայացքների տեր այս գործիչը բացեիբաց հայտարարել էր, որ բալկանյան

երկրների «ռեցիդիվները» չպետք է թույլ տալ Արևելքում. իմա՝ Հայաստանում, և այդ իսկ տրամաբանությամբ առաջարկել է հայերին ոչնչացնել: Թուրքական պետական գործչի իսկ կողմից այդպիսով հաստատվել է, որ հայերի ոչնչացումն իսկապես պետականորեն առաջ քաշվող ծրագիր էր և դիտվել է որպես կայսրության արևելյան հատվածները «փրկելու», - ասել է թե՛ թուրքացնելու միջոց: Բեռլինի 1878 թ. կոնգրեսից քիչ առաջ Քյամիլ փաշան գրել է. «Եթե Եվրոպայում մեր ծոցում օձ տաքացրինք, ապա պետք չէ, որ նույն հիմարությունն անենք մեր ասիական Տաճկաստանում, խելոքությունն այն է, որ ջնջենք ու վերացնենք այն բոլոր տարրերը, որոնք մի օր կարող են մեզ համար նույն վտանգը ստեղծել և օտարների միջամտության համար առիթ ու նրանց ձեռքին գործիք լինել»:¹² Եվ սրան էլ չպետք է համարել հայակործան լայնամասշտաբ ծրագրերի նախակարապետ: Դեռ 1869 թ.-ին, երբ որպես թուրքական պետության անմարդկային ճնշումների հետևանք բողոքի «հակաթուրքական» ելույթների օրինակներն ըստ էության աննշան էին հայաբնակ վայրերում և հայությունը որակվում էր «միլլիեթ սատկա» (հավատարիմ ժողովուրդ), «Հաթթը Հումայուն»-ի հեղինակ Ֆուադ փաշան Աբդուլ Ազիզին ուղարկած իր «քաղաքական կտակում» արդեն առաջ էր քաշել հայերի բնաջնջման հարցը: Զարգացնելով իր նախորդի գաղա-

¹¹ Տե՛ս Սողոմոն Թեղեյանի դատավարությունը: Սղագր. նյութեր-Ե., 1990, էջ 107:

¹² Տե՛ս «Փորձ» հանդես, 1979թ., էջ 104:

փարը, Քյամիլ փաշան արդեն հայությանը՝ կայսրության ներսում բնակվող առավել ընդունակ և քաղաքակիրթ տարրին, բնաջնջելու ուղղակի, պետական հանցագործության բոլոր ախտանիշները պարունակող ծրագիր է առաջարկել: Այդ մասին մենք գրել ենք «Վասն արդարութեան» հանդեսի թիվ 2 (74) 2016 թ. համարում:¹³

Ծրագիրը ցինիկ է ու դաժան և ցեղասպան մտածելակերպի աներկբա դրսևորում է, հստակ հաշվի է առնում հայերի բոլոր խոցելի կողմերը, անպաշտպան վիճակը հատկապես և թվարկում այն ռեսուրսները, որ պետությունը կարող է մոբիլիզացնել հայ խաղաղ բնակչության դեմ (գործ, ոստիկանություն, չեթեական կազմավորումներ, քուրդ, չերքեզ և այլն): Թեհլերյանի պատմածը դատարանում իր ընտանիքի ոչնչացման վերաբերյալ, դատավարության վկաների վկայությունները և մյուս նյութերը ևս փաստում են այդ: Եվ հետագա բոլոր փորձերը ցայսօր շարունակվող հայասպան դրսևորումների՝ Արմենոցիդի համար մեղադրել հենց զոհին՝ քաղաքական դեմագոգիայի, լկտիության աստիճանի կեղծարարություն է: Դրա ենթատեքստը միայն մեկն է՝ խուսափել պատասխանատվությունից և ամրագրել ցեղասպանության հետևանքները:

Որդեգրելով հայասպան ծրագիր, որպես ազգային-պետական քաղաքականության հիմնարար ուղղություն, թուրքերն այդուհետ այն չեն հանել

իրենց քաղաքական զինանոցից: Երիտթուրքերի կառավարման տարիներին դա ամրագրվել է որպես առաջնահերթություն, իր զագաթնակետին հասել 1915-16 թթ.: Նախկին երիտթուրքական Մեվլան Ջադե Բիֆաթը իր «Օսմանյան հեղափոխության մութ ծալքերը»¹⁴ գիտական և քաղաքական բացառիկ նշանակության աշխատության մեջ բացահայտել է իթթիհադականների ծրագրի ողջ բարբարոսականությունն ու հրեշավորությունը երիտթուրքերի իսկ պարալուխների բերանով: Մասնակից լինելով հայտնի կուսակցության նիստերին, նա բերում է ղեկավար անձանց խոսքերից մեջբերումներ, որ այլ կերպ, քան ազգայնամոլության ցայտուն դրսևորումներ չանվանել չես կարող: Դրանք ուղղակիորեն և կողմնակի հաստատում են Թեհլերյանի դատավարությունում իրազեկների և դատապաշտպանների, մեղադրյալի և վկաների կողմից արված եզրակացությունների ու մեջբերված փաստերի անաչառությունն ու հավաստի լինելը: Իրենց դաժանությամբ դրանք կարող են համեմատվել միայն մոնղոլ-թաթարական արշավանքների շրջանի բարբարոսությունների, կորեական 1950-53 թթ. պատերազմում թուրքական բանակի ոճրագործությունների հետ, «Իսլամական պետություն» ահաբեկչական կազմակերպության գործողությունների հետ:

Հենվելով նախորդ տարիների հայաջինջ քաղքականության «մասնակի» դրսևորումների վրա, երտթուր-

¹³«Վասն արդարութեան» թիվ 2 (74), 2016թ., էջ 44:

¹⁴Բիֆաթ Մեվլան Ջադե «Օսմանյան հեղափոխության մութ էջերը և Իթթիհատի հայաջինջ ծրագրերը», Եր., 1999 թ., էջ 330:

քերը ձգտել են հայության իսպառ
բնաջնջման:

«Եթե 1909-ի մեր Ատանայի եւ այլ
վայրերու մեջ կատարել տուածին
նման... մաքրագործումը (ընդգրկ-
վածն իմն է,- Ռ. Պ.) ընդհանուր եւ
վերջնական պիտի չըլլայ, օգուտի տեղ
վնաս կը բերէ. պետք է հայ ազգը
արմատախիլ ըլլայ, մեր հողին վրայ,
անհատ մը անգամ չմնայ, հայ անունը
մոռցուի: Հիմա պատերազմի մեջ ենք,
ասկէ համար առիթ չի գտնուիր, մեծ
պետութեանց միջամտութիւնը և
թերթերու բողոքի ձայնը նկատելի իսկ
չի կրնար ըլլայ, ըլլալու պարագային
խնդիրը կատարուած իրողութիւն մը
կը դառնայ եւ կը փակուի. այս
անգամուան գործողութիւնը բնաջն-
ջումի գործողութիւն մը պիտի ըլլայ,
հայերէն անհատ մը իսկ չմնալու
պայմանով (ընդգծ.- Ռ. Պ.) բնաջն-
ջելով անհրաժեշտ է. թերեւս մեզմէ
ոմանք ըսեն, թէ այսչափ վայրագութիւն
ներելի է, երեխաներէն, ծերերէն եւ
անկարներէն ինչ վնաս կրնայ հասնիլ
որ ասոնց բոլորին ալ բնաջնջման
հարկ տեսնուի, ով որ յանցաւոր է այն
կը պատժուի»:¹⁵ Դահիճն այդպիսով
ինքն էլ գիտակցել է, որ
հանցագործության է մղում, բայց
համոզված է եղել, որ դա է հարցի
«լուծումը», իրենց ծրագրի հիմնա-
քարը. «Վայրագութիւնը բնութեան
օրենքն է, հարցը ասոր ընդունելի կամ
մերժելի ըլլալը տրամաբանելու մեջ է:
Ամբողջ կենդանիները, նույնիսկ
բույսերը զիրար ուտելով, զիրար

ջնջելով չեն սնանիր... Ոչ թուրք
տարրերը թող ջնջուին, որ ազգութեան
եւ որ կրօնին ալ պատկանած ըլլան:
Այս երկիրը ոչ թուրք տարրերէն
մաքրել պետք է... իմ կրօնս Թուրանն
է»:¹⁶

Ամբողջական բնաջնջման ծրագրի
առաջադրումը երևում է նաև փրկված
հայերի վկայություններից: Գերմա-
նական դատարանում որպես վկա
հանդես եկած հայ առաջնորդական
տեղապահ Գրիգորիս Պալաքյանը,
լինելով թուրքական գեհեներից հրաշքով
փրկվածներից մեկը, վկայակոչել է
Շուքրի անունով մի հարյուրապետի,
որը տեղահանության ընթացքում
առաջնորդել է նրանց (հայերին), 48
հոգուց բաղկացած խմբին՝ 16
ոստիկանի հետ: Հարյուրապետը ևս
հաստատում-բացահատում է բարձ-
րաստիճան պաշտոնյանների ծրագրե-
րի գոյությունը հայ բնակչությանը
գլխովին բնաջնջելու վերաբերյալ,
բացում փակագծերը. «... եթե միայն
տղամարդկանց սպանեինք,- բացատ-
րել է հարյուրապետը,- և ոչ կանանց ու
աղջիկներին, 50 տարի հետո մի քանի
միլիոն հայ կլինեին, ուրեմն պետք է
նաև սպանենք կանանց ու աղջիկ-
ներին, որպեսզի դադարեն ներքին ու
արտաքին խռովությունները...»:¹⁷
1895-96թթ. Արդուլ Համիդը հրամայել
էր սպանել բոլոր հայ քաղաքա-
ցիներին: Հետո այս իմացան եվրոպա-
կան ազգերը, ամբողջ քաղաքակիրթ
աշխարհը, և չէին ուզում թույլ տալ»:¹⁸
Պալաքյանի վկայությամբ նախ 14000

¹⁵Դիֆաթ Մեվլան Զադե «Օսմանյան հեղափոխության մուր» էջերը և Իթթիհատի հայաջինջ
ծրագրերը», Եր., 1999 թ., էջ 97-98:

¹⁶Դիֆաթ Մեվլան Զադե «Օսմանյան հեղափոխության մուր» էջերը և Իթթիհատի հայաջինջ
ծրագրերը», Եր., 1999 թ., էջ 98-99:

¹⁷Տե՛ս Սողոմոն Թեհլեյանի դատավարությունը: Սղագր. նյութեր-Ե., 1990, էջ 113:

¹⁸Տե՛ս Սողոմոն Թեհլեյանի դատավարությունը: Սղագր. նյութեր-Ե., 1990, էջ 113-114:

տղամարդկանց հանել էին Յոզղաթ քաղաքից և շրջակայքի հորերի մեջ սպանել: Սպանվածների կենդանի մնացած ընտանիքներին ասել էին, թե տղամարդիկ հասել են Հալեայ, «լավ են զգում այնտեղ և խնդրել են կառավարությունից՝ հրաման տալ ընտանիքներին իրենց հետևից գալու և միանալու»¹⁹, մինչդեռ սրանց էլ ճանապարհին են թալանել ու սպանել: Սա մանրակրկիտ մշակված և պետական հսկողությամբ իրականացվող մարդասպանական ծրագիր էր: Թուրքիայում գերմանական ռազմական միսիայի անդամները ևս հաստատել են հայակործան ծրագրի պետականորեն կազմակերպված լինելը. «Կառավարությունը, դատարանում վկայել է ռազմական միսիայի ղեկավար գեներալ Լիման ֆոն Սանդերսը,՝ հրամանագրել է տեղահանությունը և հենվելով թե՛ զիվորական, թե՛ քաղաքական պաշտոնյաների զեկույցների վրա, զինվորական անհրաժեշտ պատճառներից ելնելով, հարմար էր գտնում Արևելյան Անատոլիան հայերից դատարկելը»:²⁰ Բուխարեստի գերմանական դեսպանատանը հայտնաբերված փաստաթղթերը միանգամայն համոզիչ են և ցույց են տալիս, որ դեռևս 1914 թ. հուլիսին թուրքական և գերմանական ներկայացուցիչները միասին քննարկել են և որոշել կազմակերպել իրենց բնօր-

րանից հայերի բռնագաղթը: Խորհրդակցել են այդ հարցի առնչությամբ դեսպան Վանգենհայմի հետ: 1915 թ. հունիսի 17-ին Վանգենհայմն արդեն Բեռլին կանցլեր Բերթման Հոլվեյգին հայտնել է հետևյալը. «Ներքին գործերի մինիստր Թալեաթը դոկտոր Մորթմանին* հայտնել է, որ Դուռը** ուզում է օգտագործել համաշխարհային պատերազմն այն բանի համար, որ վերջնականապես հաշիվ մաքրի ներքին թշնամիների հետ, որպեսզի արտասահմանյան դիվանագիտությունը Թուրքիայի ներքին գործերին միջամտելու պատրվակ չունենա»:²¹ Գերմանական ռազմական միսիայի ղեկավար ֆոն Սանդերսն, ըստ էության, պաշտպանել է երիտթուրքերին՝ հայտարարելով, որ հայերի զանգվածային տեղահանությունը ելնում էր ռազմական անհրաժեշտությունից: Իսկ դատախազ Գոլնիկը պաշտպանել է թուրքական այն տեսակետը, որը դահճի մեղքը հանիրավի դնում էր զոհի վրա. «Պոլսի կառավարությունը տեղեկություն էր ստացել,՝ հայտարարել է դատախազ Գոլնիկը,՝ որ հայերը մտածում են դավաճանության մասին և վճռել են, երբ իրավիճակը թույլ տա թիկունքից հարձակվեն թուրքերի վրա և գլուխ բերել իրենց անկախությունը: Այդ պատճառով Պոլսի կառավարությունը պետական և զինվորական ինքնապահովման հետ

¹⁹ Տե՛ս Սողոմոն Թեհլեյանի դատավարությունը: Սղագր. նյութեր-Ե., 1990, էջ 114:

²⁰ Տե՛ս Սողոմոն Թեհլեյանի դատավարությունը: Սղագր. նյութեր-Ե., 1990, էջ 108:

*Մորթման, Օսմանյան կայսրությունում Գերմանիայի դեսպանությանն առընթեր հայկական հարցերի Ստամբուլի գրասենյակի պետ:

**Բարձր դուռ կամ Դուռ,՝ այսպես էր անվանվում Օսմանյան կառավարությունը

²¹ Տե՛ս Սողոմոն Թեհլեյանի դատավարությունը: Սղագր. նյութեր-Ե., 1990, էջ 8:

անհրաժեշտ էր համարել հայերի տեղահանությունը»:²² Դատախազն, ըստ էության, անաչառ չէ և թուրք ազգայնականների դիրքերից է խոսում, անգամ կասկածի տակ դնում թուրքական կառավարության ղեկավարների հեռագրերի իսկությունը: Նաև, նսեմացնելով թուրքական տրիբունալի որոշումները, համարել է, որ. «...կենտրոնական Եվրոպայի պետությունների (իմա՝ գերմանական ռազմական բլոկի երկրների՝ Գերմանիա, Ավստրո-Հունգարիա, Բուլղարիա, -Ռ.Պ.) բարեկամ երիտթուրքերի կառավարությունը հեռացվեց և նրա տեղը գրավեց մի նոր կառավարություն, որն ստիպված էր, ընդհակառակը, քայլելու այդ պետությունների թշնամիների՝ Անտանտի պետությունների հետ»:²³ Այսպիսով Գոլնիկը հանդես է եկել ոչ այնքան արդարադատության, որքան որ երիտթուրքերի կառավարության դաշնակցի դիրքերից: Ըստ նրա ստացվում է, որ թուրքական պետությունն իրավունք ուներ ամբողջ ազգեր բանտել ու լլկել, նրանց ունեցվածքը թալանել, ծրագրեր ու իրականացնել բնաջնջում, իսկ նրանք՝ հայերը՝ հատկապես, չպետք է դրան հակադարձեին, չպետք է պաշտպանեին իրենց կյանքի իրավունքը և չպետք է փորձեին թոթափել օտարի ծանր լուծը: Դատապաշտպանները կարողացել են համոզիչ փաստերով մերժել դատախազի մոտեցումները և վեր հանել անլուր հանցագործության

վերաբերյալ ողջ ճշմարտությունը: Դատապաշտպաններից մեկը միանգամայն տեղին և տրամաբանական հարց է տվել. «...ինքներդ դատեցեք, թե արդյոք հնարավոր էր դա՝ առանց վերնից եղած սիստեմատիկ ղեկավարության» (այսինքն՝ պետության ուղղորդող դերի, -Ռ. Պ.), և հավելել՝ դեպքերին ինքնաբուխ ընդհարումների բնույթ հաղորդելու պնդումներին ի պատասխան. «Իսկապես թուրք կառավարությունն այդքան անզոր էր, որ չկարողանար այդ աղետի դեմ միջոցներ ձեռք առնել»:²⁴ Փաստերը ճիշտ հակառակն են ապացուցում. «Բավական է այն պարզ ու անվիճելի իրողությունը, - նշել է պաշտպան Գորդոնը, - որ մի քանի ամսվա ընթացքում 1.800.000 հայերից տեղահանվել են 1.400.000-ը և որոնցից մեկ միլիոնը սպանվել է, ինչպես նաև այն, որ տարբեր վայրերից այդ դժբախտների քարավանները քշվեն են նույն կենտրոնները...»:²⁵ Այսինքն, երբ երկիրը ռազմական դրության մեջ է և ամեն ինչ ենթարկվում է Ներքին գործերի ու ռազմական նախարարություններին, այդ ինչպես է ստացվում, որ չեն կարողանում կանխել նման լայնամասշտաբ տեղահանությունները, կոտորածներն ու թալանը: Տեղահանությունների գործարկված մեխանիզմը, ոստիկանական և չեթեական ջոկատների, ինչպես և քուրդ ու չերքեզ, չէչեն խուժանի ներգրավումը միմիայն վկայում են դրանց պետականորեն

²² Տե՛ս Սողոմոն Թեհլեյանի դատավարությունը: Սղագր. նյութեր-Ե., 1990, էջ 150

²³ Տե՛ս Սողոմոն Թեհլեյանի դատավարությունը: Սղագր. նյութեր-Ե., 1990, էջ 151:

²⁴ Տե՛ս Սողոմոն Թեհլեյանի դատավարությունը: Սղագր. նյութեր-Ե., 1990, էջ 158:

²⁵ Տե՛ս նույն տեղում:

կազմակերպված լինելու և պետության կողմից խրախուսվելու մասին: Իրազեկ դոկտոր Վերթաուերի հիմնավորված եզրահանգումները կատարվածի ողջ պատասխանատվությունը իրավացիորեն դնում են Օսմանյան կայսրության վրա. «... Եթե այդ կոմիտեն, այնուամենայնիվ, տվեց հրաման և նման մարդկանց (քրեածին տարրերի հատկապես, - Ռ. Պ.) վստահեց տեղահանության գործը, - ասել է իրազեկ գերմանացի իրավաբանը, - ապա հետևանքի համար ինքն է պատասխանատու. «անշուշտ, հանցավոր եմ ճանաչում ժանդարմներին, որոնք ճանապարհին ոճիրներ գործեցին, բայց այնքան հանցավոր, որքան Պոլսում եղած անձը, որ տեղահանության գործը հանձնեց նման մարդկանց ձեռքը: Ամբողջ մեղքն ընկնում է կառավարության վրա, որը տվեց տեղահանության հրամանը և իրագործեց կասկածելի մարդկանց միջոցով»:²⁶

Այսպիսով մերժվում է կառավարության անմեղության կանխավարկածը և հաստատվում, որ դա պետական ծրագիր է եղել: Դոկտոր Վերթաուերը հողմացրիվ է անում հայերի «դավաճանության» վերաբերյալ անհեթեթ մեղադրանքը: «Եթե հայերը մինչև իսկ դավաճանած լինեին ուրիշ ժողովուրդների հետ, եթե մինչև իսկ մի կուրացած ղեկավար դավաճանած և ռուսներին միացած լինեք, երիտթուրքերն այնուամեն-

այնիվ, գիտեին, որ կային հազարավոր կանայք ու երեխաներ, որոնք այս պատմություններին երբեք տեղյակ չէին, տեղահանության հրամանի առաջին պայմանը պետք է լինեք մի խիստ կարգադրություն՝ հոգալու կանանց, երեխաների և տղամարդկանց մասին, որոնք կապ չունեին դավաճանների հետ: ... Եթե առանձին լեռնային գյուղերում մնար ժողովրդի այս կամ այն հատվածը, դա երբեք ոչ մի կապ չէր ունենա ռազմական անհրաժեշտության հետ»²⁷, - պնդել է իրավաբանը:

Ցնցող ու ծանրակշիռ են դատապաշտպան դոկտոր Վերթաուերի հետևյալ դիտարկումները: «Եթե մեկը, - նկատել է իրավաբանն իր ելույթում, - որպես իր ժողովրդի ազատարար, սպանում է մի մարդու, որը վտանգավոր ու ոճրական գործողություն է ծավալում այդ ժողովրդի դեմ, անտարակույս նա այսպես պիտի մտածած լինեք. «Այս մարդը հայ ժողովրդի թշնամին է, եթե նա դուրս գա Գերմանիայից ու Էնվերի նման միանա բոլշևիկներին, նորից մեր կանայք ու երեխաները կկոտորվեն»:²⁸ Այսպիսով, ըստ էության դրվում է նաև թուրք-բոլշևիկյան մեղսակցության խնդիրը Հայաստանի դեմ գործողությունների ենթատեքստում: * Անկասկած սա Թեհլեյանի արարքի իրատեսական, ողջամիտ գնահատականն է՝ ամբաստանյալի արարքի մեջ ցույց է տրվում ինքնապաշտպա-

²⁶ Տե՛ս Սողոմոն Թեհլեյանի դատավարությունը: Սղագր. նյութեր-Ե., 1990, էջ 198:

²⁷ Տե՛ս Սողոմոն Թեհլեյանի դատավարությունը: Սղագր. նյութեր-Ե., 1990, էջ 198-199:

²⁸ Տե՛ս Սողոմոն Թեհլեյանի դատավարությունը: Սղագր. նյութեր-Ե., 1990, էջ 191:

* Մենք այս խնդրին մտադիր ենք անդրադառնալ մեկ այլ հոդվածում:

նական գործողության ենթատեքստ, որ Վերթաուերն անվանում է «ստիպողական ինքնապաշտպանություն»:²⁹ Թալեաթի և թալեաթականության մեջ տեսնելով պետականորեն մշակված հանցակազմ, դոկտոր Վերթաուերը հիշատակում է նաև միջազգային հանցագործության երանգ կրող այն փաստը, որ «երիտթուրքերը դաշնակցել էին նաև Լենինի ու Տրոցկու հետ»³⁰, նա դրանով իսկ ընդգծում է այն հանգամանքը, որ Թալեաթի սպանությամբ կանխվել են թալեաթականների նոր ոճրագործությունները:

«Մեկ միլիոն սպանվածների, ամբողջ մի ժողովրդի վրիժառուն է, որ կանգնած է այդ ժողովրդի սպանության համար պատասխանատու անձի բոլոր տանջանքների հեղինակի դիմաց, - ասել է դատապաշտպանը: ... Ամբաստանյալը միաժամանակ հանդես է գալիս որպես իր ընտանիքի ներկայացուցիչ, որպես իր մոր ներկայացուցիչ: ... Նա մարդկայնության ներկայացուցիչը, ընդդեմ հակամարդկայնության... , ճնշվածների ներկայացուցիչ՝ ընդդեմ ճնշողների հավաքական ներկայացուցիչ»³¹ (Թալեաթի, -Ռ. Պ.):

Այժմ քննենք ջարդերի իրականացման մեխանիզմի հետ կապված մի փաստ, որ հանրությանն է հանձնել

վերը հիշատակված Բիֆաթը: Խոսքը ջարդերը հետևողականորեն իրագործելու գործողությունների մասին է, որ շարադրել է Շաքիրը: «...Մեր ստանձնած պարտականությունը ինչ է. հայերը առանց բացառության՝ երեխա, կին, աղջիկ, ծեր ու անկար, մինչև վերջին անհատը սպանել և բնաջնջել չէ... ասիկա ամեն մարդու դիրությունամբ կա-տարելիք սովորական գործ է... Ինչպես ամեն գործի համար, ասոր համար ալ այս գործերով զբաղված, փորձառու եղած մարդիկը փնտռել և գտնել վերջ կազմակերպության մը ենթարկելու եւ կանոնաւոր կերպով գործել տալու աշխատիլ պէտք է (ընդգծումն իմն է, - Ռ. Պ.) ... ասիկա հասարակ եւ վայրագ ոճրագործութիւն մըն է, զինոր մը կաթնակեր մանուկ մը մօրը գիրկէն յափշտակելով մօրը աչքերուն առջեւ չի կրնար գլուխը ջախջախել»³². ... Ես կը կարծեմ, որ մեզի յարմար մարդիկը գտած եմ. ըսեմ թէ ուր գտայ, - բանտերուն մեջ»³³ (Ավելորդ չէ ընգծել, որ այս նույն ձեռագիրը 1988-ին կրկնվել է նաև Ադրբեջանի Սուլգայիթ քաղաքում Կոմկուսի քաղկոմի քարտուղարի ցուցումով):

Այսպես գլխավոր ոճրագործներից մեկը՝ Բեհաեդդին Շաքիրը ու մյուսները, հիմնավորում, ապա և եղյակ կազմով գործողության մեջ են դնում

²⁹ Տե՛ս նույն տեղում:

³⁰ Տե՛ս Սողոմոն Թեհլեյանի դատավարությունը: Սղագր. նյութեր-Ե., 1990, էջ 196:

³¹ Տե՛ս Սողոմոն Թեհլեյանի դատավարությունը: Սղագր. նյութեր-Ե., 1990, էջ 201-202:

³² Բիֆաթ Մեվլան Զադե «Օսմանյան ցեղասպանության մութ էջերը և Իթթիհատի հայաջինջ ծրագրերը», Եր., 1999 թ., էջ 115:

³³ Բիֆաթ Մեվլան Զադե «Օսմանյան ցեղասպանության մութ էջերը և Իթթիհատի հայաջինջ ծրագրերը», Եր., 1999 թ., էջ 115:

հանցագործության մեքենան՝ «Թեշքի-լաթը մահուսեն» (Հատուկ կազմակերպություն)՝ քրեական տարրերից կազմված ելուզակների ու մարդասպանների կազմակերպությունը:

Նույն նիստում Շաքիրը ներկայացրել է նաև տեղահանվող հայ բնակչության ոչնչացման մանրամասն ծրագիր. «...ներքին նախարարին հետ կ'որոշենք եւ իւրաքանչիւր շրջանակի պետք եղածին չափ այս ուժերէն կը դրկենք. ասոնք մեր նշանակելիք ճամբաներուն յարմար վայրերուն վրայ հասնելիք հայ կարաւաններուն կը սպասեն. ներքին նախարար Թալեաթն ալ այդ քաղաքներուն վարչական պաշտօնեաներուն կը հրահանգէ, որ հոն գտնուող բոլոր հայերուն, պատերազմական շրջագիծէն դուրս գտնուելու հարկը պատճառաբանելով, խումբ-խումբ եւ իւրաքանչիւր երկու օրը անգամ մը, ոստիկանգինուորներու հսկողութեան տակ այս ինչ ճամբէն այն ինչ տեղը դրկուին... Ոստիկանները «մասնավոր կազմակերպութեան» չէթէներուն կեցած վայրը հասնելուն՝ խումբերը չէթէներուն կը յանձնեն ու կը վերադառնան: Չէթէներն ալ այս հայերուն մինչեւ վերջին անհատը անմիջապէս կը սպաննեն եւ որպէսզի հանրային առողջութիւնը չվնասի, դիակները նախապէս պատրաստուած փոսերու մէջ կը ձգեն ու կը թաղեն»:³⁴ Վկա տիկին Քրիստինե Թերզիպաշյանի

հարցաքննությունը լիովին հաստատում է Շաքիրի ուղեղում ծնված ու նրա իսկ ղեկավարությամբ կյանքի կոչված ամբողջ մի ազգի բնաջնջելու սխեման: Եվ ապա, «գործը» հիմնականում ավարտած համաբեկով, Բեհաէդդին Շաքիրը Էրզրումից Անթալիայի մութասերիֆին հեռագրել է. «Էրզրումի, Վանի, Բիթլիսի, Դիարբեքիրի, Սվազի, Տրապիզոնի շրջաններում ոչ մի հայ չի մնացել, բոլորն աքսորվել են Մոսուլի և Տեր-Ջորի կողմերը»:³⁵

Վերստին անդրադառնանք վկա, սպանդից փրկված տիկին Թերզիպաշյանի վկայություններին. «1915թ. հուլիսին բնակիչներին հավաքեցին: Ասացին, թե պետք էր հեռանալ քաղաքից (Էրզրումից, - Ռ. Պ.): ...նախ ոստիկանների և պաշտոնյաների միջոցով քաղաքի հարուստներին լուր տրվեց և ապա ասացին, թե պետք է քաղաքը դատարկվի, որովհետև այն գտնվում է ռազմական գծի վրա, և քաղաքացիները պետք է հեռանան»: Չորս խմբերով 8 օրում քաղաքի հայերին հանել են: «Մեր ընտանիքը բաղկացած էր 21 անդամից: Նրանցից մնացել են միայն երեքը»:³⁶

Վկայությունը տիպական է ոչնչացման դատապարտված բոլոր հայերի համար և հաստատում է Շաքիրի առաջարկած ծրագրի իրականացումը:

Թերզիպաշյանենց խումբը բաղկա-

³⁴ Բիֆաթ Մեվլան Զադե «Օսմանյան ցեղասպանության մութ էջերը և Իթթիհատի հայաջինջ ծրագրերը», Եր., 1999 թ., էջ 117:

³⁵ «Հայերի ցեղասպանությունն ըստ երիտթուրքերի դատավարության փաստաթղթերի», Ե., 1988., էջ 47:

³⁶ Տե՛ս Սողոմոն Թեհլեյանի դատավարությունը: Սղագր. նյութեր-Ե., 1990, էջ 94-95

ցել է 500 ընտանիքներից, ուղեկցվել 30 ոստիկանի և մեկ զինվորի կողմից: Երիտասարդներին զատել և սպանել են նախօրոք, մի մասին էլ իրար են կապել և նետել գետը: Անհաշիվ վկայություններ կան տեղի ունեցած սարսափազդու վայրագությունների վերաբերյալ:

«Կատարման եղանակները ամենուրեք նման են նրանց, որոնք այստեղ մեզ ներկայացրին Թեհլեյանը և տիկին Թերզիպաշյանը,- հաստատել է դոկտոր Լեփսիուսը: Ինչպես կարելի է այսքան կարճ ժամանակում միլիոնավոր մարդկանց սպանել: Դա հնարավոր էր ամենավայրագ եղանակներով, ինչպես ապացուցված է նաև դատավարության ճառերում, որ Կ. Պոլսում ռազմական ատյանի առաջ լավեցին Թալեաթ փաշայի և նրա ընկերների դեմ»:³⁷

Մեծ հումանիստ Յոհաննես Լեփսիուսը, ով երկար տարիներ ուսումնասիրել է արևմտահայերի դրությունն Օսմանյան կայսրությունում, պատերազմի տարիներին կարողացել է հրապարակել բազմաթիվ փաստաթղթեր և ցույց տվել, որ թուրք կառավարիչների կողմից հայոց բնաջնջումը նախօրոք ծրագրված գործողություն էր: Նա նաև վեր է հանել Գերմանիայի մեղսակցության հանգամանքը հայոց մեծ ողբերգության խնդրում:

Բացահայտելով տեղահանության իրական ենթատեքստը՝ նա դատա-

րանում ասել է. «Ի՞նչ է նշանակում այս աքսորը... Թալեաթի տպագրած հրամանագրի մեջ այս խոսքը կա. «Աքսորավայրն է ոչնչություն»:³⁸ Իսկ տեղահանված ամբողջ բնակչությունից միայն 10 տոկոսն է հասել քսորավայր, «մնացած 90 տոկոսը ճամփին սպանվեց, բացի ոստիկանների կողմից վաճառված և քրդերից առնանգված կանանցից և աղջիկներից, սովից և ուժասպառությունից մահացան»:³⁹ Այսպիսով, եթե դիմենք դատապաշտպան Ֆոն Գորդոնի եզրակացությանը և մյուս փաստերին, պիտի արձանագրենք, որ «հայերի այս սիստեմատիկ ոչնչացումը չի ծագել ժողովրդի կրքերի պոռթկումից, այլ ղեկավար շրջանակների կողմից խնամքով չափված ու որոշված վարչաքաղաքական միջոց էր, որ ի կատար ածվեց»:⁴⁰

Առանձին ուշադրություն է դարձված Յեղասպանության փաստերը նենգափոխելու ու խեղաթյուրելու, պատմությունը կեղծելու փորձերին: Այս ուղղությամբ դեռ 19-րդ դարի վերջերից սկսած թուրքական պետությունը հսկայական փորձ էր կուտակել, ստեղծել ահավոր ստախոսության, կեղծիքի ու զրպարտանքի զինանոց, և ինչը փշրելու խնդրի առումով ևս Բեռլինյան դատավարության նյութերը շատ արժեքավոր են:

Երբ Հայոց ցեղասպանությունը դիտարկում ենք ՄԱԿ-ի Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագ-

³⁷ Տե՛ս Սողոմոն Թեհլեյանի դատավարությունը: Սղագր. նյութեր-Ե., 1990, էջ 100-101:

³⁸ Տե՛ս Սողոմոն Թեհլեյանի դատավարությունը: Սղագր. նյութեր-Ե., 1990, էջ 99

³⁹ Տե՛ս նույն տեղում:

⁴⁰ Տե՛ս Սողոմոն Թեհլեյանի դատավարությունը: Սղագր. նյութեր-Ե., 1990, էջ 215:

րի, Միջազգային իրավունքի այլ, ընդունված նորմերի շրջանակներում, Ցեղասպանագիտության զարգացող գիտության ձեռքբերումները հաշվի առնելով, ապա միանգամայն ակնհայտ է դառնում կատարված հանցագործությունը ժխտելու անհեռանկարայնությունն ու ծայրաստիճան վտանգավորությունը: Նման կարգի հանցանքը ժխտելը հավասարագոր է այն շարունակելուն:

Թուրքիան պետք է ընդունի այն անժխտելի իրողությունը, որ ցեղասպանությունն իրագործվել է հայ ժողովրդի դիմադրական ոգին ճնշելու, նրա մարդկային իրավունքները ոտնահարելու, էթնիկական մաքրագրում իրականացնելու, պանթուրքական ծրագրերից ելնող մոնոէթնիկ թուրքական պետություն ստեղծելու հայատյաց հիմքի վրա: Կատարված հանցագործության և շարունակվող ժխտողական քաղաքականության մեջ փնտրել հայ ժողովրդի «մեղքի» բաժինը, հայտարարել «ընդհանուր ցավի» մասին (Էրդողան, Դավութօղլու), նշանակում է լինել ոչ կառուցողական, հավասարության նշան դնել զոհի և դահիճի միջև, լղոզել ցեղասպան պետության կողմից պատասխանատվության խնդիրը, ծանրացնել ոճիրը, նաև անպատժելիությամբ խրախուսել նման նոր ոճիրների ծավալումը:

Հայ ժողովուրդը վիկտիմիզացիայի է ենթարկվել, և Թուրքիայի կողմից իր մեղքի ընդունումը, ներողություն հայցելն ու փոխհատուցման խնդրի ընդունումը կարող են օգնել հաղթահարելու այդ վիճակը, հաշտեցման եզրեր փնտրելու հարևան ժողովուրդների միջև:

Հենց այսպիսի լեյտմոտիվ ունեն Գերմանիայի դաշնային հանրապետության պառլամենտի Բունդեսթագի ընդունած բանաձևը՝ կապված Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցի, Գերմանիայի մեդսակցության և ժողովրդավար այդ պետության հետագա մտադրությունների հետ՝ նպատելու ցեղասպանության հետևանքների հաղթահարմանը:

Այսպիսի հայեցակետով միջազգային մի շարք հարթակներում հանդես է գալիս ականավոր պատմաբան, ակադեմիկոս, ցեղասպանագետ և Ցեղասպանագետների միջազգային ասոցիացիայի անդամ Նիկոլայ Հովհաննիսյանը: Մեծ ծավալի աշխատանք է կատարում Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտը:

Պատմական արդարությունը պետք է հաղթանակի, Թուրքիան պետք է առերեսվի իր պատմությանը, և բարձրանա քաղաքակիրթ Գերմանիայի մակարդակին և ներողություն խնդրի հայերից: Այլ կերպ հնարավոր չէ երկու ժողովուրդների միջև հաշտության եզրերի որոնումը և խաղաղ գոյակցության ու փոխադարձ հարգանքի հաստատումը: Դա հայ ժողովրդի ապագայի, ազգային անվտանգության խնդիր է, որը բխում է Մարդու իրավունքների հռչակագրից: Դա ճանապարհ է Թուրքիայի համար՝ դառնալու եվրոպական ժողովուրդների ընտանիքի անդամ: Հենց այսպիսի մոտեցումներն են արտացոլված Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցի առթիվ ընդունված համահայկական հռչակագրում: Եվ սա հայ ժողովրդի բարի կամքի դրսևորումն է:

**ԹՈՒՐԳԱԿԱՆ ՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ
ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ
ԾՐԱԳՐՈՂ ԵՎ ԿԱԶՄԱԿԵՐՊԻՉ.
ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ ԸՍՏ
ՍՈՂՈՍՈՆ ԹԵՀԼԵՐՅԱՆԻ
ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՆՅՈՒԹԵՐԻ
(ԲԵՌԼԻՆ, 2-3 ՀՈՒՆԻՍԻ, 1921Թ.)**

**«АРМЕНОЦИД» КАК ПЛАН И
ПРЕСТУПЛЕНИЕ ТУРЕЦКОГО
ГОСУДАРСТВА: АНАЛИЗ ПО
МАТЕРИАЛАМ СУДЕБНОГО
ЗАСЕДАНИЯ НАД С. ТЕЙЛЕРЯНОМ
ОТ 2-3 ИЮНЯ 1921Г. В
БЕРЛИНЕ**

ՌՈՒԲԵՆ ՎԱՉԱԳԱՆԻ ՊԱՐՍԱՄՅԱՆ

Պատմաբան, Հայաստանի ժուռնալիստների միության անդամ, Հայաստանի Ազգային ագրարային համալսարանի ավագ դասախոս

РУБЕН ВАЧАГАНОВИЧ ПАРСАМЯН

Историк, Член Союза журналистов Армении, Старший преподаватель Армянского Национального Аграрного университета.

ԱՍՓՈՓՈՒՄ

Հոդվածում վերլուծված են 1921թ. մարտի 15-ին Բեռլինում Սողոմոն Թեհլերյան հայ հայրենասերի կողմից Թալեաթ փաշայի սպանության առնչությամբ հունիսին տեղի ունեցած դատավարության գրեթե չուսումնասիրված նյութերը, որոնք լրացուցիչ լույս են սփռում Հայոց ցեղասպանության մի շարք ասպեկտների, մասնավորապես՝ հանցագործությունը պետականորեն կազմակերպված լինելու հանգամանքի վրա: Դրանք նաև կարևորվում են Հայոց ցեղասպանության իրողությունը ժխտելու թուրքական պատմագրության և քաղաքագետների առաջ քաշած դրույթները մերժելու, դրանց կեղծ բնույթը վեր հանելու տեսակետից:

Բանալի բառեր. *Առաջին աշխարհամարտ, Արմենոցիդ, Թեհլերյան, Թալեաթ, Բեռլինի 1921 թ. Թեհլերյանի դատավարություն, Յոհաննես Լեփսիուս, Ռուբեն Պարսամյան:*

РЕЗЮМЕ

15 марта 1921 г. в Берлине был убит один из главарей турецкой националистической партии младотурков «Иттихат ве Теракки» Талаат паша. Он был одним из организаторов Геноцида армян в Османской империи в годы Первой мировой войны.

Суд, оправдавший Тейлеряна, состоялся 2-3 июня 1921 г.. В данной статье на основе анализа материалов немецкого суда обосновывается вывод о том, что Геноцид автохтонного армянского народа является результатом тщательно запланированной и последовательно осуществленной государственной политики, начатой еще до Берлинского Конгресса 1878 года и достигшей своего апогея в годы Первой мировой войны.

Ключевые слова: *Первая мировая война, Арменоцид, Согомон Тейлерян, Талаат, Суд в Берлине над Тейлеряном, Йоган Лепсиус, Рубен Парсамян.*

**TURKISH STATE AS THE ORGANIZ-
ER OF THE ARMENIAN GENOCIDE:
ANALYSIS BASED ON SOGHOMON
TEHLEYAN'S TRIAL MATERIALS.
BERLIN, JUNE 2-3, 1921.**

RUBEN VACHAGAN PARSAMYAN

*Historian, Member of Union of Jour-
nalists of Armenia, Senior Lecturer at the
National Agrarian University of Armenia*

SUMMARY

The article analyses almost unexplored trial materials of Talaat Pasha's murder of June 1921. He was killed by the Armenian patriot Soghomon Tehlirian on 15th March, 1921, in Berlin.

The trial materials shed additional light on a number of aspects of the Armenian Genocide, in particular on the fact that this crime against humanity was organized by the Turkish Government. They are also important in denying the fact of the Armenian Genocide from the viewpoint of rejecting the provisions of the Turkish historiography and politicians and of revealing their false nature. They are also important from the viewpoint of disclose of the denying policy of the Turkish historiography and politicians of the fact of the Armenian Genocide.

Key words: *World War I, Armenocide, Tehleryan, Talaat, Berlin 1921, Tehlerian`s Trial, Johannes Lepsius, Ruben Parsamyan.*



АЛЕЕКСАНДР СИМОНОВИЧ САМАРЧЯН

*Младший научный сотрудник Института
философии, социологии и права НАН Республики
Армения*

ЧЕЛОВЕЧЕСКАЯ ЛИЧНОСТЬ, ЕЕ САМОИДЕНТИФИКАЦИЯ И ИДЕНТИФИКАЦИЯ

Человек в процессе развития усваивает социально-культурные значения, приобретает опыт значимых для него общностей (групп), осваивает все те виды деятельности, которые необходимы ему для нормального функционирования **в обществе**. Реализация этих задач предполагает наличие учителей, взрослых проводников, условно говоря “Других личностей”. Но “Другие” необходимы не только для интериоризации значений окружающей среды, включения себя в социальные общности, но и для выделения себя из окружающего мира – формирования “Я” индивида, создания собственного смыслового пространства. Таким образом, происходит, в определенном смысле, как бы соединение двух линий развития – социализации и индивидуализации.

В свою очередь, процесс становления “Я” связан с параллельно протекающими процессами идентификации “Других” и самоидентификации.

Понятие “идентичность” было введено в философию и психологию эго-психологом Э. Эриксоном. В его интерпретации это понятие обозначает твердо

усвоенный и личностью принимаемый образ себя во всем богатстве отношений личности к окружающему миру, чувство адекватности и стабильного владения личностью собственным “Я” независимо от изменений “Я” и ситуации¹. Идентичность индивида связана как с ощущением самоотождествленности и непрерывности, так и с тем, что эти качества принимаются “значимыми Другими” из непосредственного окружения².

Анализируя понятие идентичности В. Хёсле предложил условно разделять целостное “Я” личности на “Я” субъекта и “Я” объекта, называя их соответственно “Я” (the “I”) и самость (the “Self”), предполагая, что первое наделено наблюдающими рефлексивными способностями по отношению ко второму. Отождествление “Я” и самости и является собственно проблемой идентичности³.

С другой стороны, на создание нами образа собственной самости оказывают влияние образы нас, сложившиеся у других людей, особенно тех, которых мы уважаем (значимых Других); то, что Дж. Мид назвал “социальным Я” (Me).

¹ Эриксон, Э. *Идентичность: юность и кризис*. М.: Прогресс, 1996, с. 12.

² См. Там же, с. 58.

³ См.: Хёсле, В. “Кризис индивидуальной и коллективной идентичности”. *Вопросы философии*, 1994 г., № 4, с. 115.

Различие между “Я” и самостью в том, что “Я” – это осознаваемое должное, а самость – то наличное, что мы имеем.

Самоидентификация – это построение собственной идентичности, процесс подчинения мотивов поведения сознательно выбранным ценностям-принципам. Это сознательно-рефлексивная процедура не просто отделения себя от других, но и выбор собственного независимого пути развития.

Для субъекта, ориентирующегося в своем выборе на человеческие ценности-принципы, критерием адекватности самооценки является следование им, особенно в критических ситуациях. Таким образом, основной проблемой самоидентификации является то, в какой мере декларируемые в рамках собственного сознания ценности-принципы являются побудительной силой в ситуациях, где имеется выбор.

Под ценностями-принципами подразумеваются носящие императивный характер мировоззренческие конструкты, лежащие в основе поведенческих реакций, в том числе и на нестандартные (критические, конфликтные) ситуации.

Далее, идентификация “Я” со стороны “Другого” (“социальное Я”) – это интерпретация совершенных “Я” поступков и предсказание того, как “Я” поведет себя в ситуациях, где автоматизм (норма) должен уступить место выбору, основанному на приписываемых “Я” или декларируемых им ценностях.

В идеале самоидентификация совпадает с идентификацией “Я” со стороны значимых Других.

Можно говорить о двух основных причинах кризиса идентичности:

- несовпадение того, как “Я” представляет себя от того, как его представляют другие;

- отличие того, как “Я” считает должным поступать, от того, как “Я” поступает на самом деле. Причина конфликта в этом случае – низкий уровень детерминации мотивов поведения со стороны декларируемых ценностей-принципов.

Можно выделить два уровня в структуре идентичности: персональный, являющийся ядром личности, и социальный, проявляющийся в различных сегментах (малых и больших, формальных и неформальных группах) **человеческого общества**.

Каждая такая группа имеет как общецелевую направленность, так и внутренние правила функционирования (ценности, нормы, стиль поведения).

Условно можно выделить два типа групп. В группах первого типа поощряется и стимулируется развитие персональной идентичности и формирование целостной личности⁴. Целью такой группы является именно ее устойчивое функционирование. Примерами таких групп могут служить, например, семья, любые группы со значимыми “Другими”.

Для групп второго типа характера направленность на достижение общей цели или реализацию схожих интересов и способностей. Отношения между членами такой группы могут носить чисто формальный характер и не затрагивать по существу ценностно-смысловую сферу. К таким группам могут относиться как производственные коллективы, так и неформальные объединения по интересам, спортивные секции и т.п.

Функциональные особенности обоих типов групп, однако, в ряде случаев могут меняться. Так, группы первого типа могут способствовать также и развитию социальной идентичности, если, к примеру, в рамках семьи создается камерный ансамбль или члены семьи совмест-

⁴ См.: Марцинковская, Т.Д. “Субкультура в транзитивном обществе”. *Вопросы психологии*, 2013 г., № 4, с. 68.

но занимаются моделированием.

На расширение, в дополнение к основным, функций в группах второго типа, может влиять возрастание роли неформального общения, направленного на улучшение общей атмосферы в группе. Так, в случае высокого уровня персональной идентичности руководителя группы он может стать “значимым Другим” для подчиненных и, следовательно, оказывать стимулирующее влияние на формирование у них соответствующего уровня как социальной, так и персональной идентичности.

В зависимости от степени развития персональной идентичности, наличия и преодоления личностью кризисных периодов происходит изменение ее отношения к своему месту в группах обоих типов.

Так, результатом кризиса может стать пересмотр внутренних ценностей и, как следствие, изменение персональной идентичности, что, в свою очередь, влияет на отношения со значимым Другими, которые способствовали формированию прежней идентичности.

С другой стороны, кризис может привести и к изменению социальной идентичности (выбор другой сферы деятельности, появление иных профессиональных интересов).

Примем допущение, что на пути интеграции “Я” личность проходит следующие этапы:

- идентификация с Другими (И1);
- идентификация Других (И2);
- самоидентификация (СИ).

Идентификация с Другими (И1) как начальный этап становления личности,

отличие от *личности*, “не имеет отличных от принятых в данной культуре собственных представлений и самостоятельного поведения”⁵.

Разница между социальным индивидом и личностью - в том, что социальный индивид определяется через усвоение социокультурного опыта, а личность – через овладение собственным поведением и способностью самостоятельно действовать, а также через саморегуляцию⁶.

На этапе И1 появляется так называемая *преждевременная идентичность*, когда такие элементы как цели, ценности, убеждения появляются у индивида “не в результате самостоятельного поиска и выбора, а в основном вследствие идентификации с родителями или другими значимыми людьми”⁷.

На этапе И2 индивид приобретает способность к идентификации как отрицательных, так и положительных Других. Процессы И1 и И2 протекают параллельно, и с развитием индивида доля И2 возрастает вследствие обособления “Я” не только от “не -Я” отрицательных, но и от “не -Я” положительных. Этот этап соответствует той стадии развития личности, на которой она дистанцируется и самоопределяется по отношению к социальным группам и общностям, в которые она входит⁸.

Наконец, этап самоидентификации СИ соответствует уровню личностной автономии, на котором становится возможным самостоятельное поведение, основывающееся на общечеловеческом опыте, приобретаемом “через доступ к общему социальному фонду”⁹.

⁵ Цит. по: Леонтьев Д.А. “Личностное измерение человеческого развития”. *Вопросы психологии*, 2013 г., № 3, с. 72.

⁶ См.: Там же.

⁷ Антонова Н.В. “Проблемы личностной идентичности в интерпретации современного психоанализа, интеракционизма и когнитивной психологии”. *Вопросы психологии*, 1996 г., № 1, с. 134.

⁸ См.: Леонтьев, Д.А. Указ. соч., с. 73.

⁹ Там же, с. 75.

по определению В.М. Розина, характерна для *социального индивида*, который, в

Следует отметить, что индивид может остановиться в своем развитии на

любом из указанных этапов, т.е. “личностное развитие, выходящее за рамки созреваания и социализации, факультативно”¹⁰.

Любой человек в поисках собственной идентичности может проигрывать варианты своего поведения в различных ситуациях, создавать некие альтернативные образы собственного “Я”. Такая своеобразная “спонтанная” театральность является естественным проявлением человеческой натуры. Однако, когда иллюзии берут верх над реальностью, можно говорить о проявлениях невроза¹¹. Как отмечает С. Исаев, “склонность к актерству, лицедейству в обыденной жизни, желание заместить свое “Я” заимствованным, выдуманным, иным “Я”, получило в психологии название гистрионизма”¹².

Эксперименты с идентичностью проявляются, в частности, в таком феномене, как ролевые игры. Популярные среди молодежи, они дают возможность в процессе поиска собственной идентичности обыгрывать непрожитые в реальной жизни воображаемые ситуации, тем самым в определенном смысле подготавливая себя к реальности. Кроме того, играя роли отличных от себя “Других”, тем самым воспитывают в себе терпимость к иной точке зрения, иной позиции¹³.

Между тем, вызывает возражение тезис о том, что ролевое “Я”, создаваемое на базе персонажа, взятого из литературного или кинематографического произведения, может быть органично обыгра-

могут быть известны “логика характера” и “внутренний мир” персонажа, а также, как он может смотреть на мир “глазами персонажа, сжившись с ним и реагируя на события, исходя из его, персонажа, логики мышления”¹⁴.

Во-первых, литературный или киногерой – это плод фантазии соответственно писателя или драматурга и представлен в книге, а тем более в кинокартине фрагментарно. Представление же о характере и, особенно, внутреннем мире персонажа, имеют лишь его создатели (в случае если они их вообще домысливали). Следовательно, здесь мы имеем дело с попыткой создания образа персонажа самим игроком, исходя из его жизненного опыта и уровня личностного развития.

В ролевых играх (которые, в отличие от театральных постановок, строго не предполагают наличия зрителей), как и в случае крайних проявлений “спонтанной” театральности, излишняя отдача игре, когда теряется чувство отстраненности и происходит слишком глубокое погружение в образ персонажа, может служить признаком желания устраниваться от решения собственных жизненных проблем¹⁵.

Еще одной сферой, где принято манипулирование собственной идентичностью, являются социальные сети. Различные варианты электронного общения начинают играть здесь определяющую роль. В частности, одна из сторон общения – социальная **перцепция** – приобретает в условиях электронного общения специфические особенности, главная из

¹⁰ Там же, с. 74.

¹¹ См.: *Как всегда - об авангарде: Антология французского театрального авангарда*. М.: Союз театр, 1992, с. 183.

¹² Там же.

¹³ См.: Труфанова, Е.О. “Идентичность и Я”. *Вопросы философии*, 2008 г., № 6,

¹⁴ См.: Там же, с. 101.

¹⁵ См.: Там же.

но. В частности, неясно, откуда игроку которых заключается в том, что основ-

ной модус общения здесь – вербальный. С помощью вербальных средств может быть сделана попытка создать ложное, завышенное представление о своей идентичности, построить своеобразную виртуальную идентичность. Однако, отраженные в вербальных текстах уровни грамотности, общей образованности, культурного развития, могут быть адекватно идентифицированы в процессе вербального диалога (обмена текстами) с действительно развитой личностью. Можно предположить, что успешной может быть попытка построения в виртуальном пространстве только той идентичности, которую в реальном мире индивид уже оставил в прошлом.

В целом, как и в описанных выше случаях, в сфере электронного общения “наличие альтернативных идентичностей может интерпретироваться как свидетельство затянувшегося поиска собственной идентичности в молодом возрасте”¹⁶, преодоления тех качеств, которые, по какой-либо причине не устраивают личность.

ՄԱՐԴԿԱՅԻՆ ԱՆՀԱՏԸ, ՆՐԱ

¹⁶ Войскунский, А.Е. “Социальная перцепция в социальных сетях”. *Вестник московского университета*. Серия 14. Психология, 2014 г., 2, с. 102.

**ԻՆՔՆԱՆՈՒՅՆԱՑՈՒՄԸ
(ԻՆՔՆԱՃԱՆԱԶՈՒՄԸ) ԵՎ
ՆՈՒՅՆԱՑՈՒՄԸ**

*նականացում, Ալեքսանդր Մամար-
յան:*

ԱԼԵՔՍԱՆԴՐ ՄԻՄՈՆԻ ՍԱՄԱՐՉԱՆ

*ՀՀ Գիտությունների ազգային
ակադեմիայի Փիլիսոփայության, սո-
ցիոլոգիայի և իրավունքի ինստի-
տուտի կրտսեր գիտաշխատող*

ԱՄՓՈՓՈՒՄ

*Հոդվածում մարդկային անհատի
ինքնությունը սահմանվում է որպես
անձի կողմից հաստատակամորեն
յուրացված և ընդունված սեփական
“Ես”-ի պատկեր, որը ցանկացած
իրավիճակներում ուղղորդվում է
կայուն վերահսկողության զգացումով:
Վերլուծվում են մարդու ինքնանույ-
նականացման (որպես սեփական
ինքնության կառուցում, վերահսկո-
ղություն և դրա ուղղորդում) և
նույնականացման (որպես “Ես”-ի
կերպարի ձևավորում «Ուրիշ»
անհատների կողմից) հասկացույթ-
յունները: Ներկայացվում են անհա-
տական և սոցիալական ինքնություն-
ները մարդկային հասարակության
մեջ: Նկարագրվում են դրանց
դրսևորումները հասարակության
տարբեր խմբերում: Ինքնության ճգնա-
ժամերը, դրանց պատճառներն ու
հետևանքները զուգադրվում են անձի
զարգացման փուլերի հետ: Բերվում
են սեփական ինքնության հետ
ձեռնածությունների օրինակներ,
դրանց պատճառներն ու հետևանք-
ները:*

*Բանալի բառեր. Անհատա-
կանություն, ինքնանույնացում, նույ-*

**ЧЕЛОВЕЧЕСКАЯ ЛИЧНОСТЬ,
ЕЕ САМОИДЕНТИФИКАЦИЯ И
ИДЕНТИФИКАЦИЯ**

**АЛЕКСАНДР СИМОНОВИЧ СА-
МАРЧЯН**

*Младший научный сотрудник
Института философии, социологии и
права НАН Республики Армения*

**HUMAN INDIVIDUAL, HIS
SELFIDENTIFICATION AND
IDENTIFICATION**

ALEXANDER SIMON SAMARCHYAN

*Junior research fellow, Institute of Phi-
losophy, Sociology & Law of the Armeni-
an National Academy of Sciences*

РЕЗЮМЕ

В статье идентичность человеческой личности определяется как твердо усвоенный и принимаемый личностью образ собственного “Я”, сопровождаемый чувством стабильного контроля над ним в любых ситуациях. Анализируются понятия *самоидентификации* человека (как построение собственной идентичности, контроля над ней и ее коррекции) и *идентификации* (как создания образа “Я” со стороны “Других” индивидуумов). Выделяются персональная и социальная идентичности в человеческом обществе. Описываются их проявления в различных группах общества. Кризисы идентичности, их причины и последствия соотносятся со стадиями развития личности в целом. Приводятся примеры манипуляций с собственной идентичностью, их причины и последствия.

Ключевые слова: *личность, самоидентификация, идентификация, Александр Самарчян*

SUMMARY

Identity is defined in the article as a decisively internalized and accepted image of one’s own “I” by a person that is accompanied by a sense of a stable control over it in any situation. The concepts of *self-identification* (as ‘construction’ of, control over and correction of one’s own identity) and *identification* (as creation of “I” identity by the Others) are analyzed. Personal and social identities are distinguished and their manifestations in various groups are described. Identity crises, their causes and consequences are juxtaposed with personality development stages. Examples of manipulations with one’s own identity, their causes and consequences are brought.

Key words: *individual, selfidentification, identification, Alexander Samarchian*



ՔՐԻՍՏԻՆԵ ՍԱՐԳՍԻ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ

*Երևանի պետական համալսարանի Իրավագիտության
ֆակուլտետի «Քաղաքացիական իրավունք և դատա-
վարություն» մասնագիտացմամբ մագիստրատու-
րայի 2-րդ կուրսի ուսանողուհի*

ՄՈՐԱՏՈՐԻՈՒՄԻ ԻՆՍՏԻՏՈՒՏԻ ԻՐԱՎԱԿԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ ՄԱՆԿՈՒԹՅԱՆ ՎԱՐՈՒՅԹՈՒՄ

«Մանկության մասին» ՀՀ օրենքը¹ (այսուհետ՝ Օրենք) կոչված է պարտատերերի շահերի պաշտպանությանը, որը դրսևորվում է նախ և առաջ ֆինանսական դժվարություն ունեցող ընկերության առողջացմանն ուղղված քայլերով, իսկ դրա անհնարինության դեպքում՝ ընկերության գույքի հաշվին պարտատերերի պահանջների բավարարումով: Այլ կերպ ասած, սնանկության ինստիտուտի նպատակն է՝ հնարավորություն տալ բարեխիղճ և պարտաճանաչ պարտապանին վերականգնել իր բնականոն գործունեությունը, հաղթահարել ֆինանսական դժվարությունները, վերականգնել նրա կենսունակությունը և միևնույն ժամանակ ապահովել պարտատերերի շահերի պաշտպանությունը²:

Շատ երկրների սնանկության մասին օրենքներում նախատեսված են մեխանիզմներ, որոնք նպատակ ունեն

պահպանել պարտապանի գույքային զանգվածը, և ոչ միայն խոչընդոտում են լուծարման կամ առողջացման գործընթացի ընթացքում պարտատերերի կողմից գոյություն ունեցող իրավական պաշտպանության միջոցների օգտագործմանը, իրենց իրավունքների հարկադիր իրականացման համար գործողությունների իրականացմանը, այլ նաև ապահովում են պարտապանի նկատմամբ արդեն իսկ ձեռնարկված գործողությունների կասեցումը: Այդ մեխանիզմների կիրառման շրջանակներով պայմանավորված, օգտագործվում են տարբեր տերմիններ՝ «մորատորիում», «կասեցում» կամ «ժամանակավոր կասեցում»³: Մորատորիումն (լատ. Moratorium՝ դանդաղեցնող, հետաձգող) իրենից ներկայացնում է պարտավորությունների կատարման հետաձգում, որը, որպես կանոն, տեղի է ունենում գործարքի կամ այլ իրավահարաբերության

2/76 2017

ՎԵՍՏ

ՄՐԳԱՐՈՒԹՅԱՆ

¹ Ընդունվել է. 2006. 12.25, ուժի մեջ է մտել 2007.02.10.: Տե՛ս ՀՀՊՏ 2007.01.31/7(531)

² Տե՛ս ՀՀ վճռաբեկ դատարանի թիվ ԱՎԴ/0060/04/12 քաղաքացիական գործով 2014 թվականի մայիսի 08-ի որոշումը:

³ Տե՛ս Legislative Guide on Insolvency Law the United Nations Commission on International Trade Law (UNCITRAL), Էջ 97, http://www.uncitral.org/pdf/english/texts/insolven/05-80722_Ebook.pdf

կողմերի հսկողությունից դուրս գտնվող հանգամանքների հետևանքով (պատերազմ, ճգնաժամ, աղետներ և այլ արտակարգ իրավիճակներ)⁴։ Անդրադառնալով մորատորիումի ինստիտուտին՝ ՀՀ Վճռաբեկ դատարանը նշել է, որ «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 39-րդ հոդվածով նախատեսված՝ պարտատերերի պահանջների բավարարման սառեցումը կամ մորատորիումը պարտապանի վճարունակության վերականգնման նպատակին հասնելու միջոցներից մեկն է։ Այն առաջնահերթ ուղղված է **պարտապանի գույքի էական նվազեցում թույլ չտալուն**⁵։ ՌԴ Սահմանադրական դատարանը⁶ հաստատել է, որ սնանկության վարույթում կիրառվող մորատորիումն իրենից ներկայացնում է հանրային իրավական միջամտություն մասնավոր իրավական հարաբերություններին։ Հեղինակները նշում են, որ տվյալ դեպքում տեղի է ունենում պարտատերերի իրավունքների սահմանափակում օրենքով սահմանված կարգով⁷։

Մորատորիումի իրականացման ավտոմատ կամ դիսկրեցիոն եղանակները։

Մորատորիումի իրականացման դեպքում նախ և առաջ հարց է առաջանում այն մասին, թե այն պետք է իրականացվի ավտոմատ կերպով (սնանկության մասին օրենսդրության ուժով), թե դատարանի հայեցողությամբ

(դիսկրեցիոն)։ Այս հարցի որոշման համար կարող են նշանակություն ունենալ տեղական քաղաքական նկատառումները և այնպիսի գործոններ, ինչպիսիք են՝ հուսալի ֆինանսական տեղեկատվության առկայությունը և այնպիսի անկախ դատական մարմնին պարտապանի ու պարտատիրոջ հասանելիության հնարավորությունը, որը սնանկության վերաբերյալ գործերի քննության փորձ ունի։ Մորատորիումի իրականացումը դիսկրեցիոն հիմքով կարող է հնարավորություն տալ հարմարեցնել դրա պայմանները կոնկրետ գործի հանգամանքներին և խուսափել ինչպես մորատորիումի իրականացման չարդարացված դեպքերից, այնպես էլ ապահովված պարտատերերի իրավունքների չարդարացված միջամտությունից։ Պարզապես նման մոտեցումը կարող է առաջացնել ուշացումներ, պայմանավորված համապատասխան հարցերի քննարկման ժամկետներով, հնարավորություն չտալ վերլուծել իրավիճակն այն պարտատերերի և երրորդ անձանց համար, որոնց վրա պետք է տարածվի մորատորիումի գործողությունը, և կարող է պահանջել համապատասխան մեխանիզմների մշակում։ օրինակ՝ ժամանակավոր միջոցները, մինչև մորատորիումի իրականացման մասին դատարանի կողմից որոշման կայացումը, ինչպես նաև պահանջել մորատորիումի կիրառման վերաբեր-

⁴ Տե՛ս [https://en.wikipedia.org/wiki/Moratorium_\(law\)](https://en.wikipedia.org/wiki/Moratorium_(law))

⁵ Տե՛ս ՀՀ վճռաբեկ դատարանի թիվ 3-1717(ՏԴ) քաղաքացիական գործով 2007 թվականի դեկտեմբերի 12-ի որոշումը։

⁶ Տե՛ս C3 PՓ. 2001. N 29. Տմ. 3058

⁷ Տե՛ս Ращевский Е. Мораторий на удовлетворение требований кредиторов//Хозяйство и право. 2001. N 11; Юхнин А.В.//ФЗ "О несостоятельности (банкротстве)

յալ ծանուցման իրականացում:

Որպես այլընտրանքային մոտեցում, որը ձգձգումները հասցնում է նվազագույնի և հնարավորություն է տալիս առավելագույնս ավելացնել ակտիվների արժեքը, ապահովում է արդարացիությունը, կանոնակարգվածությունը, ինչպես նաև սնանկության գործով վարույթի հստակությունն ու կանխատեսելիությունը, կարելի է համարել մորատորիումի *ավտոմատ* իրականացումը կոնկրետ գործողությունների նկատմամբ: Այս մոտեցումը գործում է նաև «Մասնկության մասին» ՀՀ օրենքում:

Մորատորիումի իրականացման պահը:

Մորատորիումի իրականացմանն առնչվող հարցերից է այն, թե որ պահից է մորատորիումը սկսում գործել ինչպես լուծարման, այնպես էլ առողջացման վարույթում:

«Մասնկության մասին» ՀՀ օրենքի 39-րդ հոդվածի համաձայն մորատորիումի գործողությունը սկսվում է դատարանի կողմից վարույթ հարուցելու մասին որոշումն ընդունելու պահից: Նման կարգավորումը, մեր կարծիքով, ընդունելի չէ հետևյալ պատճառով. Օրենքի 17-րդ հոդվածի համաձայն դատարանը սնանկության մասին դիմումը, վարույթ ընդունելու մասին որոշումը պարտապանին է ուղարկում հաջորդ օրը⁸: Հոդվածի բովանդակությունից երևում է, որ այն կարող է առաքվել նաև սովորական փոստային առաքմամբ: Այսինքն՝ վարույթի հարուցումից մինչև պարտապանի փաստացի իրազեկվելը անց-

նում է որոշակի, տևական ժամանակ: Մինչդեռ, պարտապանի նկատմամբ սնանկության վարույթի հարուցված լինելու և համապատասխանաբար նաև մորատորիումի սկսված լինելու մասին իրազեկված լինելը *conditio sine qua non* (պայման, առանց որի հնարավոր չէ) կարևոր պայման է, որպեսզի վերջինս իր գործողությունները համապատասխանեցնի օրենքի պահանջներին: Գործող կարգավորումը հաշվի չի առնում նաև բարեխիղճ երրորդ անձանց շահերը, որոնք կարող են այդ ընթացքում գործարքներ կնքել պարտապանի հետ՝ չիմանալով նրա մոտ գործարք կնքելու իրավունքի սահմանափակված լինելու հանգամանքի մասին:

Առավել տարածված մոտեցման համաձայն՝ մորատորիումը սկսվում է վարույթի հարուցման պահից, երբ վարույթի հարուցման չափանիշների բավարարման հարցերը արդեն լուծված են: Վարույթի հարուցումից մինչև սնանկության մասին վճռի օրինական ուժի մեջ մտնելը նախատեսվում է «մեղմ» մորատորիում, քանի որ առկա է պարտապանի գույքի կազմի փոփոխության հնարավորություն: Մասնավորապես, պարտապանը կարող է չդիմանալ ակտիվները իր ձեռնարկության տիրապետումից հանելու գայթակղությանը, իսկ պարտատերերը, իմանալով դիմումի ներկայացման մասին, մորատորիումի գործողությունից խուսափելու նպատակով կարող են օգտագործել պարտապանի դեմ սիրավական պաշտպանության միջոցները:

⁸ Հարկադրված սնանկության վերաբերյալ դիմումը վարույթ ընդունելու հաջորդ օրը դատարանը պարտապանին է ուղարկում դիմումը վարույթ ընդունելու մասին որոշումը՝ կցելով դիմումի պատճենը: (հոդվ. 17.1)

Օրենքը մորատորիումի իրականացումը նախատեսում է երկու փուլով. առաջին՝ սնանկության դիմումը վարույթ ընդունելու պահից, և երկրորդ՝ պարտապանին սնանկ ճանաչելու մասին վճռի օրինական ուժի մեջ մտնելու պահից:

Գործողությունները, որոնց նըկատմամբ տարածվում է մորատորիում:

Մի շարք երկրներում ընդունված է, որ մորատորիումի արդյունավետության ապահովման համար այն պետք է տարածվի իրավական պաշտպանության բոլոր միջոցների և դատավարական գործողությունների վրա: Անկախ այն հանգամանքից, դրանք կիրառվում են վարչական, դատական թե անհատական կարգով, պետք է խոչընդոտվի պարտապանի նկատմամբ որոշակի գործողությունների իրականացումը, և պետք է սահմանափակվի ինչպես ապահովված, այնպես էլ չապահովված պարտատերերի կողմից իրենց իրավունքների հարկադիր կարգով իրականացումը:

Օրենքի 39-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ սնանկության վերաբերյալ դիմումը վարույթ ընդունելու պահից՝

ա) արգելվում է առանց դատարանի որոշման պարտապանի կողմից իր պայմանագրային կամ այլ պարտավորություններով պարտատերերին դրամական կամ այլ բավարարում տալը, ի մարումն պարտքի որևէ գործողություն

կատարելը, բացառությամբ պարտապանի բնականոն ընթացիկ գործունեության հետ կապված պարտավորությունների,

բ) արգելվում է առանց դատարանի որոշման պարտապանի գույքի, ինչպես նաև նրա մասնակցի (մասնակիցների) սեփականությունը հանդիսացող պարտապան կազմակերպությունում ունեցած բաժնեմասերի (բաժնետոմսերի, փայտաբաժինների և օրենքներով սահմանված այլ արժեթղթերի) օտարումը, վարձակալության տալը, գրավադրումը կամ այլ ձևով ծանրաբեռնումը, բացառությամբ օրենքի 55-րդ հոդվածի երկրորդ մասով նախատեսված դեպքերի (խոսքը վերաբերում է շուտ փչացող ապրանքների իրացմանը),

գ) կասեցվում են գույքային բռնագանձումներով բոլոր կատարողական վարույթները, արգելվում են կատարողական և այլ փաստաթղթերով սահմանված անվիճելի կարգով գանձումները,

դ) արգելվում է պարտատիրոջ՝ մինչև պարտապանին սնանկ ճանաչելու մասին դիմում ներկայացնելը, պարտապանի նկատմամբ ստանձնած ցանկացած պարտավորության հաշվանցը՝ պարտապանի նկատմամբ ունեցած իր պահանջի հետ, բացառությամբ օրենքի 40.1 հոդվածով նախատեսված դեպքերի⁹:

Վերոնշյալ միջոցների նախատեսումը նպատակ ունի ապահովել

⁹ Շահագրգիռ անձի դիմումով դատարանը որոշում է կայացնում մորատորիումի ընթացքում որոշակի գործողությունների կատարումը թույլատրելու վերաբերյալ, եթե՝

ա) առաջանում է համարժեք պաշտպանություն տալու անհրաժեշտություն.

բ) տվյալ գույքը վաճառքի (իրացման) ենթակա չէ: (օրենքի 40.1 հոդված):

գույքային զանգվածի պաշտպանությունը պարտատերերի, երրորդ անձանց և պարտապանի գործողություններից: Այն դեպքերում, երբ սնանկության գործով նշանակվում է ժամականավոր կառավարիչ, շատ երկրների օրենքներում նախատեսվում է, որ պարտապանը կամ ամբողջությամբ կորցնում է հսկողությունը գույքային զանգվածի նկատմամբ և իրավունք չունի որևէ գործարք կնքել վարույթի հարուցումից հետո, կամ էլ թեկուզ սահմանափակ ծավալով պահպանում է ընթացիկ գործարարական գործունեություն իրականացնելու հետ կապված իրավասությունները և կարող է գործարքներ կնքել միայն բնականոն գործունեության շրջանակներում:

Օրենքը չի կարգավորում պարտապանի կողմից պարտավորությունների կատարման համար տրված, ուժի մեջ չմտած ապահովումների իրավական ճակատագիրը սնանկության վարույթ հարուցվելու դեպքում: Մի շարք երկրներում նախատեսվում են կոնկրետ ժամկետներ, որոնց ընթացքում այդ ապահովված իրավունքները երրորդ անձանց հետ հարաբերություններում կարող են ուժի մեջ մտնել գրանցման, հրապարակման կամ այլ միջոցներով¹⁰: Մակայն կարծում ենք, որ տվյալ պարագայում ավելի ճիշտ կլիներ կասեցնել պարտապանի կողմից տրված ապահովումների ուժի մեջ

մտնելը¹¹:

Լինում են դեպքեր, երբ սնանկության մասին դիմումը ներկայացվում է պարտավորությունների կատարումից խուսափելու կամ որոշակի ժամանակահատվածում պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար սահմանված տոկոսների վճարումից ազատվելու նպատակով: Ակնհայտ է, որ նման դեպքերում վնաս է պատճառվում պարտատերերի շահերին, քանի որ օրենքը մորատորիումի գործողության ընթացքում, մասնավորապես, վարույթ հարուցելու պահից մինչև պարտապանի սնանկության հարցի որոշումը, նախատեսում է պարտատերերի իրավունքների բավական խիստ սահմանափակում: Կարծում ենք, որ նշված խնդիրը պետք է լուծել վնասի հատուցման ինստիտուտի շրջանակներում՝ պարտապանի համար նախատեսվել վնասի հատուցման պարտականություն բոլոր այն դեպքերում, երբ ապացուցվում է, որ սնանկության դիմումն իրականում ներկայացվել է պարտավորությունների կատարումից ազատվելու նպատակով¹²:

Օրենքի 39-րդ հոդվածի 2-րդ մասը նախատեսում է մորատորիումի 2-րդ փուլը: Մասնավորապես, պարտապանին սնանկ ճանաչելու մասին վճիռն օրինական ուժի մեջ մտնելու

¹⁰ *Sté u Legislative Guide on Insolvency Law, the United Nations Commission on International Trade Law (UNCITRAL),* Էջ 101, http://www.uncitral.org/pdf/english/texts/insolven/05-80722_Ebook.pdf:

¹¹ *Sté u European Insolvency Procedures, Clifford Chance LLP, October 2010, Ukraine* Էջ 9, 78 https://www.cliffordchance.com/content/dam/cliffordchance/PDFs/CC_Euro_Insolvency_Pro_Oct10.pdf:

¹² Միևնույն ժամանակ պետք է նշել, որ նման իրավիճակները որպես կանոն հնարավոր են պարտապանի՝ պարտատերերից մեկի հետ չարամիտ համաձայնության արդյունքում, քանի որ կամավոր սնանկության դեպքում մորատորիումի գործողության ժամկետը շատ կարճ է:

օրվանից՝

1) պարտապանի պարտավորությունների կատարման ժամկետները համարվում են սկսված,

2) արգելվում է առանց դատարանի որոշման պարտապանի կողմից իր ցանկացած պայմանագրային կամ այլ պարտավորություններով պարտատերերին դրամական կամ այլ բավարարում տալը, բացառությամբ պարտապանի ֆինանսական առողջացման ծրագրով նախատեսված դեպքերի,

3) դադարում է պարտապանի վճարային, ներառյալ՝ հարկերի, տուրքերի և պարտադիր այլ վճարների գծով պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար ցանկացած տեսակի տույժերի, տոկոսների և տուգանքների հաշվեգրումը,

4) կարճվում կամ ավարտվում են պարտապանից գումարի բռնագանձման կամ գույք հանձնելու պահանջով քաղաքացիական, վարչական կամ արբիտրաժային տրիբունալի վարույթում գտնվող գործերը, և պարտապանի դեմ պարտատերերի պահանջները կարող են ներկայացվել սնանկության վարույթի շրջանակներում՝ օրենքով սահմանված ժամկետներում և կարգով,

5) կարճվում է պարտապանի վերաբերյալ հայցի ապահովման, բռնագանձման և այլ բնույթի ցանկացած կատարողական վարույթ, բացառությամբ օրենքով սահմանված դեպքերի,

6) վերանում են պարտապանի գույքի վրա դրված արգելանքներն ու սահմանափակումները:

Պետք է նկատի ունենալ, որ օրենքի 39-րդ հոդվածով նախատեսված մորատորիումը սկսում է գործել պարտապանին սնանկ ճանաչելու մասին վճռի օրինական ուժի մեջ մտնելու պահից՝ անկախ այդ վճռի բողոքարկված լինելու հանգամանքից¹³:

Շարունակվող վարույթի նկատմամբ մորատորիումի գործողության տարածման նպատակներից մեկն այն է, որ կառավարչը կարողանա վերահսկողություն իրականացնել պարտապանի նկատմամբ հարուցված վարույթների նկատմամբ¹⁴: Այսպես, վարույթին սնանկության գործով կառավարչի մասնակցության դեպքում, դատարանում համապատասխան հարցերի պատշաճ քննության արդյունքում, վերջինս կարող է վիճարկել հայցը, որը կարող է մերժվել կամ կարող է նշանակվել վճարման նվազ չափ:

Վճռաբեկ դատարանը փաստել է, որ եթե պարտապանին սնանկ ճանաչելու մասին վճիռն օրինական ուժի մեջ մտնելու պահին դատարանի վարույթում քննվող (ընթացիկ) գործ առկա չէ, այդուհանդերձ, պարտապանին սնանկ ճանաչելու մասին վճիռն օրինական ուժի մեջ մտնելուց հետո գործին մասնակից չդարձված անձանց կողմից բերված բողոքի հիմքով հարուցվում է օրինական ուժի մեջ մտած դատական ակտի վերանայման վարույթ, այդ վարույթի նկատմամբ նս տարածվում

¹³ Տե՛ս չճ վճռաբեկ դատարանի թիվ ԱՎԴ/0060/04/12 քաղաքացիական գործով 2014 թվականի մայիսի 08-ի որոշումը:

¹⁴ Տե՛ս Legislative Guide on Insolvency Law, e United Nations Commission on International Trade Law (UNCITRAL), էջ 102, http://www.uncitral.org/pdf/english/texts/insolven/05-80722_Ebook.pdf:

է մորատորիում¹⁵:

Մասնկության մասին որոշ երկրների օրենքներ սահմանափակում են հայցերի տեսակները, որոնք կարող են հարուցվել, կամ թույլատրում են միայն որոշակի հայցերի հարուցումը կամ շարունակվելը, օրինակ՝ պարտապանի աշխատողների հայցերը, պարգապես այդ գործերով կայացված ցանկացած վճռով հարկադիր կատարում հայտնվում է մորատորիումի գործողության ներքո: Մասնկության մասին որոշ երկրների օրենքներ տարբերակում են անցկացնում դրամային հայցերի և կարգավորիչ հայցերի միջև: Մի շարք երկրներում թույլատրվում է ինչպես կարգավորիչ, այնպես էլ դրամական հայցերի հարուցումը և շարունակվելը, իսկ այլ երկրներում միայն կարգավորիչ հայցերի հարուցումը, մասնավորապես նրանք, որոնք ուղղված չեն դրամական միջոցների ստացմանը, այլ ուղղված են կենսականորեն կարևոր և անհրաժեշտ հասարակական շահերի պաշտպանությանը, շրջակա միջավայրին վնաս հասցնող կամ էլ քաղաքացիների առողջությանը կամ անվտանգությանը սպառնացող գործունեության սահմանափակմանը:

Ակնհայտ է, որ մորատորիումը նպատակ ունի պաշտպանել պարտապանի շահերը՝ թույլ տալով վերջինիս գործունեություն իրականացնել առանց վճարելու իր պարտքերը: Այս կապակցությամբ, կարևոր է այն հարցի պատասխանը, թե մորատորիումի ավարտից հետո ինչ չափով կարող են պարտատերերը ակնկալել

իրենց պահանջների բավարարում¹⁶: Այս հարցի կապակցությամբ գոյություն ունի 2 տեսություն:

1. Տեսությունն իրենց պարտապանի: Այս տեսության համաձայն՝ սնանկության վարույթի ընթացքում պահանջների կատարման կասեցման հետ միաժամանակ դադարեցվում են նաև պարտավորությունները չկատարելու համար օրենքով կամ պայմանագրով սահմանված սանկցիաները: Հետևաբար, մորատորիումի ավարտին պարտատիրոջը կարող է վերադարձվել միայն հիմնական պարտքի գումարը և տոկոսների այն չափը, որը գոյություն է ունեցել սնանկության մասին վճիռն օրինական ուժի մեջ մտնելու պահին: Ակնհայտ է, որ նման կարգավորումը ձեռնտու չէ պարտատերերին: Այս տեսության իրականացման օրինակ կարելի է բերել Ուկրաինայի և Ուզբեկստանի օրենսդրությունը:

2. Տեսությունն իրենց պարտատիրոջ: Սրա համաձայն՝ չնայած նրան, որ պահանջների կատարումը կասեցվում է, բոլոր սանկցիաներն ու տոկոսները շարունակում են հոսել: Հետևաբար, մորատորիումի ավարտին պարտատերը կարող է պահանջել ինչպես հիմնական պարտքի գումարը, այնպես էլ սնանկության վարույթի ամբողջ ընթացքի տոկոսները: Քանի որ տոկոսները կարող են կազմել բավականին մեծ գումար, նման պահանջը կարող է բացասական հետևանք ունենալ պարտապանի համար, որը վերականգնել է իր վճարունակությունը արտաքին կառավարմուն արդ-

¹⁶ Այս հարցի վերաբերյալ առավել մանրամասն տե՛ս Ելյուկինա Մ.Յ. Основы конкурсного права. էջ 348

¹⁵ Տե՛ս ՀՀ վճարելի դատարանի թիվ ԵԱԴԿ/0199/02/11 քաղաքացիական գործով 2015 թվականի հուլիսի 17-ի որոշումը:

յունքում: Ակնհայտ է, որ նման կարգավորումը ձեռնտու չէ պարտապանին: Այս տեսությունը գործել է ՌԴ նախկին «Մնանակության մասին» օրենքով և հիմա գործում է Ադրբեջանում:

Այս հարցի կապակցությամբ ՀՀ օրենսդրությունը կողմնակից է հոգուտ պարտապանի տեսության, որի համաձայն՝ սնանկության վարույթի ընթացքում պահանջների կատարման կասեցման հետ միաժամանակ դադարեցվում են նաև պարտավորությունները չկատարելու համար օրենքով կամ պայմանագրով սահմանված սանկցիաները: Հետևաբար, մորատորիումի ավարտին պարտատիրոջը կարող է վերադարձվել միայն հիմնական պարտքի գումարը և տոկոսների այն չափը, որը գոյացել է սնանկության մասին վճիռն օրինական ուժի մեջ մտնելու պահին: Նման կարգավորումը ձեռնտու չէ պարտատերերին: Գտնում ենք, որ օրենքի նշված կարգավորումները խախտում են պարտատերերի շահերը, այն իմաստով, որ վարույթի ընթացքում վերջիններս մորատորիումի գործողության հետևանքով ըստ էության զրկված են իրենց պահանջների բավարարում ստանալու հնարավորությունից, իսկ վարույթի ավարտից հետո էլ փաստորեն չեն կարող ստանալ նաև տոկոսները, որոնք պետք է հաշվեգրվեին վարույթի ամբողջ ընթացքում: Բացի այդ, չեն բացառվում դեպքերը, երբ սնանկության մասին դիմումը կարող է ներկայացվել հենց մորատորիումի գործողության ընթացքում տոկոսների

վճարումից խուսափելու նպատակով¹⁷: Ուստի, գտնում ենք, որ արդարացի կլինեք, որ օրենքը պարտատերերին իրավունք վերապահեք ստանալ նաև մորատորիումի գործողության ընթացքում հաշվեգրված տոկոսները պահանջելու իրավունք, որի բավարարումը կարելի էր նախատեսել վերջին հերթով:

Մորատորիումի գործողությունից բացառությունները:

Օրենքը սահմանում է, որ մորատորիումի գործողությունը չի տարածվում՝

ա)ալիմենտների բռնագանձման վրա,

բ)միջանկյալ բաշխման ծրագրերով ժամանակավոր կառավարչի վարձատրության, վարչական և պարտապանի ընթացիկ գործունեության համար անհրաժեշտ այլ ծախսերի վրա,

գ)ապահովված իրավունք ունեցող պարտատիրոջ ապահովված իրավունքի առարկայի վրա, եթե դատարանը սույն օրենքով սահմանված կարգով պարտատիրոջը թույլատրել է դրա իրացումը արտադատական կարգով,

դ)ի ապահովումն սնանկության գործընթացում գտնվող պարտապանի պարտավորությունների կատարման՝ երաշխիք կամ երաշխավորություն տված անձանց կողմից այդ երաշխիքի կամ երաշխավորության գծով դրամական կամ այլ բավարարում տալու կամ դրա կատարմանն ուղղված ցանկացած գործողության կամ գործընթացի վրա: Ընդ որում, պարտապանի սնանկության գործընթացը չի ազդում

¹⁷Ինչպես արդեն նշվեց նման դեպքերում պարտատերերի համար օրենսդրությամբ պետք է նախատեսվի վնասների հատուցում պահանջելու իրավունք:

ի ապահովումն պարտապանի պարտավորությունների կատարման երաշխիք կամ երաշխավորություն տված անձի՝ երաշխիքով կամ երաշխավորությամբ ստանձնած պարտավորությունների կատարման վրա,

ե) օրենքի 40.1-ին հոդվածով նախատեսված դեպքերում:

▪ Կարծում ենք, որ մորատորիումի գործողությունը չպետք է տարածվի նաև պարտատիրոջ դեմ ուղղված այն պահանջների նկատմամբ, որոնց հատուցման պարտականությունը կրում է ապահովագրական կազմակերպությունը, քանի որ պարտատիրոջ գույքի նվազեցում տեղի չի ունենում¹⁸,

▪ կյանքին կամ առողջությանը պատճառված վնասի հատուցման պահանջների նկատմամբ, քանի որ, գտնում ենք, որ այս պահանջները ունեն ավելի մեծ կարևորություն քան, օրինակ՝ վարչական ծախսերը կամ կառավարչի վարձատրությունը¹⁹,

▪ այն պահանջների նկատմամբ, որոնց առարկան հանդիսանում այնպիսի գույք, որն օրենքի ուժով չի կարող լինել պարտապանի տիրապետման ներքո²⁰,

▪ վիճակագրի (գույքն ուրիշի ապօրինի տիրապետումից ետ պահանջելու) հայցերի նկատմամբ:

Ապահովված պարտատերեր: Տարբեր երկրների սնանկության վերաբերյալ օրենսդրությունները ունեն

էական տարբերություններ ապահովված պարտատերերի նկատմամբ մորատորիումի գործողության վերաբերյալ: Որպես կանոն, պարտապանի սնանկության դեպքում պարտատերերը հակված են իրականացնել իրենց ապահովված իրավունքները, եթե պարտապանները ի վիճակի չեն վերադարձնել պարտքը: Եթե ճանաչենք ապահովված իրավունքի սահմանման նպատակը, ապա կարող ենք եզրակացնել, որ սնանկության գործի հարուցումից հետո ապահովված պարտատերերի համար չեն կարող սահմանվել արգելքներ, որոնք խոչընդոտում կամ հետաձգում են վերջիններիս իրավունքների անհապաղ իրականացումը: Վերջին հաշվով, ապահովված իրավունքով ծանրաբեռնված գույքի արժեքը արտահայտում է ապահովված պարտատիրոջ վստահության աստիճանը՝ գույքի արժեքի սահմաններում օգտվելով նման ապահովված իրավունքի իրականացման հնարավորությունից: Այդ պատճառով, որևէ միջոց, որը թուլացնում է պարտքը պահանջելու վերաբերյալ ապահովված պարտատիրոջ վստահությունը կամ ապահովված իրավունքի արժեքին վնաս է պատճառում, օրինակ՝ մորատորիումը հարկադիր կատարման գործողությունների իրականացումը հետաձգելու նպատակով, պետք է համակողմանի քննարկել: Մասնավորապես, խնդիրը

¹⁸ *Sté u European Insolvency Procedures*, Clifford Chance LLP, October 2010, England and Wales էջ 9, https://www.cliffordchance.com/content/dam/cliffordchance/PDFs/CC_Euro_Insolvency_Pro_Oct10.pdf:

¹⁹ *Sté u Федеральный закон "О несостоятельности (банкротстве)" от 26.10.2002 N 127-ФЗ*, http://www.consultant.ru/document/cons_doc_LAW_39331/:

²⁰ Ընդ որում դրա իրացումից ստացված դրամական միջոցները պետք է փոխանցվեն սնանկության համապատասխան հաշվին:

կայանում է նրանում, որ եթե ապահովված իրավունքների համար տրամադրված պաշտպանությունը թուլանում է, ապա վարկի տոկոսի գումարը կարող է աճել ավելի մեծ ռիսկի փոխհատուցման դիմաց²¹:

Միևնույն ժամանակ, շատ երկրների սնանկության մասին օրենքներ նախատեսում են, կարգ, որը թույլ է տալիս ապահովված պարտատերերին ազատորեն իրականացնել պարտքերով ծանրաբեռնված գույքի նկատմամբ իրենց իրավունքները: Այդ պատճառով, ապահովված իրավունք ունեցող պարտատերերի պահանջները պաշտպանության որոշակի միջոցների տրամադրման պայմանով կարող են ներառվել մորատորիումի գործողության ներքո: Անհրաժեշտ է նշել, որ հաճախակիացել են այն դեպքերը, երբ բանկերը և այլ ֆինանսական հաստատությունները համաձայնում են մորատորիումի իրականացմանը վերականգնման կամավոր բանակցությունների միջոցով, այնպիսի կանոնների իրականացման միջոցով, ինչպիսին է «Լոնդոնյան մոտեցումը»²²: Պետք է նշել, որ մեր Օրենքը ևս նախատեսում է ապահովված իրավունքի առարկայի նկատմամբ մորատորիումի տարածման հնարա-

վորություն՝ առողջացման ծրագրի արդյունավետ իրականացման նպատակներից ելնելով²³:

Մասնկության մասին տարբեր երկրների օրենքները նախատեսում են տարբեր մոտեցումներ ապահովված պարտատերերի նկատմամբ լուծարման վարույթում մորատորիումի կիրառման հարցի վերաբերյալ: Ընդհանուր սկզբունքի համաձայն, երբ կառավարչի ֆունկցիաները սնանկության գործով կայանում են գույքի հավաքման, իրացման և պարտատերերի միջև իրացման արդյունքում ստացված միջոցների բաշխման մեջ, ապահովված պարտապանին թույլատրվում է ազատորեն իրականացնել իր ապահովված իրավունքները իրավունքով ծանրաբեռնված գույքի հաշվին՝ իր պահանջները բավարարելու նպատակով՝ առանց վնաս հասցնելու այլ ակտիվի: Նման մոտեցումն ամրագրված է նաև ՀՀ օրենսդրությամբ. գրավով ապահովված պարտատիրոջ առջև ստանձնած պարտավորության կատարման համար գրավադրված գույքը չի ընդգրկվում սնանկ ճանաչված պարտապանի գույքի կազմում և ապահովված պարտատերը կարող է այդ գույքից իր պահանջների բավարարում ստանալ սնանկության վարույթից դուրս ՀՀ

²¹ *St´u Legislative Guide on Insolvency Law, e United Nations Commission on International Trade Law (UNCITRAL), Էջ 106, http://www.uncitral.org/pdf/english/texts/insolven/05-80722_Ebook.pdf:*

²² *Այս մոտեցման էությունը կայանում է նրանում, որ կենտրոնական բանկերի կողմից մշակված ծրագրի շրջանակներում բանկերը կամ այլ ֆինանսական հաստատությունները փոխադարձ համաձայնությամբ որոշում են թույլատրել մորատորիումի տարածումը իրենց ապահովված պահանջների նկատմամբ՝ պարտապանի առողջացման նպատակով: Լայնորեն կիրառվում է զարգացած երկրներում:*

²³ *Մանրամասն իրավական կարգավորումները տե՛ս Օրենքի 39 և 41-րդ հոդվածները:*

քաղաքացիական օրենսդրությամբ սահմանված ընդհանուր կարգով:

Սակայն, պետք է նշել, որ այն դեպքերում, երբ նախատեսված է վերոնշյալ մոտեցումը, հնարավոր է նախատեսել որոշակի սահմանափակում այն դեպքերի համար, երբ սնանկության գործով կառավարիչը կարող է հասնել գույքի արժեքի առավելագույնս ավելացման տեսանկյունից լավագույն արդյունքի՝ ելնելով բոլոր պարտատերերի շահերից, եթե մորատորիումը տարածվի նաև ապահովված պարտատերերի նկատմամբ: Մա հատկապես տեղին է այն դեպքերում, երբ լուծարման վարույթի ընթացքում ձեռնարկությունը կարող է վաճառվել որպես մեկ միասնական գործող տնտեսական ամբողջություն: Կարծում ենք, որ ՀՀ օրենսդրությամբ ևս պետք է նախատեսվի նման կարգավորում:

Մնանկության մասին մի շարք երկրների օրենքներ պարունակում են դրույթներ, որոնք հատուկ ձևով ուղղված են ապահովված պարտատերերի համար մորատորիումի բացասական հետևանքների կանխմանը՝ մորատորիումի գործողության ընթացքում ապահովված պահանջների տնտեսական արժեքի պահպանման միջոցով (մի շարք իրավական համակարգերում, այդ թվում նաև ՀՀ օրենսդրությամբ, նման միջոցների ամբողջությունը կոչվում է «համարժեք պաշտպանություն»): Այն դեպքերում, երբ ապահովված իրավունքով ծանրաբեռնված ակտիվը կարող է պահպանվել գույքային զանգվածի շրջանակներում, կարող են օգտագործվել հետևյալ մոտեցումները՝

1. ապահովված իրավունքով ծանրաբեռնված ակտիվների արժեքի պաշտպանություն.

Մորատորիումի՝ գործողության ընթացքում ապահովված իրավունքով ծանրաբեռնված ակտիվների արժեքը կարող է նվազել: Նման պարագայում անհրաժեշտություն է առաջանում ապահովել հենց ապահովված իրավունքներով ծանրաբեռնված ակտիվների արժեքը, որպեսզի լուծարումից հետո այդ ակտիվների վաճառքից ստացվածն անմիջականորեն փոխանցվի պարտատիրոջը՝ վերջինիս ապահովված պահանջի չափով: Պետք է նշել, որ ՀՀ Օրենքում գործում է հենց այս մոտեցումը:

2. Պահանջի ապահովված արժեքի պահպանումը:

Ապահովված պարտատերերի շահերի պաշտպանության երկրորդ մոտեցումը պահանջի ապահովված չափի պահպանումն է: Վարույթի հարուցումից անմիջապես հետո կատարվում է ապահովված իրավունքով ծանրաբեռնված ակտիվների գնահատում, և նման գնահատման հիման վրա կատարվում է պարտատիրոջ պահանջի ապահովված գումարի չափի որոշում: Այդ գումարը ամբողջ վարույթի ընթացքում մնում է ֆիքսված, իսկ լուծարումից հետո բաշխում կատարելիս ապահովված պարտատերերի պահանջները առաջին հերթին բավարարվում են հենց այդ գումարի շրջանակում: Նման մոտեցումը օգնում է խուսափել մի շարք բարդություններից՝ կապված իրավունքով ծանրաբեռնված ակտիվների անընդհատ գնահատումից, որը կարող է պահանջվել վերոնշյալ առաջին մոտեցմանը համապատասխան:

ՀՀ գործող օրենսդրությունը ապահովված պարտատիրոջը սնանկության վարույթից դուրս արտադատական կարգով ապահովված իրավունքի առարկայի իրացման հնարավորություն տալով, չի նախատեսում իրացման որոշակի ժամկետներ: Մինչդեռ, եթե իրացումից ստացված միջոցները գերազանցում են համապատասխան ապահովված պահանջի չափը, ապա գերազանցող գումարի չափով այդ միջոցների նկատմամբ տարածվում է մորատորիում, և այդ միջոցները բաշխվում են օրենքով սահմանված կարգով (43-րդ հոդվածի 8-րդ մաս): Նման կարգավորումից ակնհայտ է, որ ապահովված պարտատիրոջ կողմից գույքի իրականացման ժամկետը ուղղակիորեն շոշափում է մյուս պարատերերի շահերը²⁴, քանի որ վերջիններս շահագրգռված են, որպեսզի գույքը հնարավորինս շուտ իրացվի և վերջիններս սնանկության գործի շրջանակներում իրենց պահանջների բավարարման հնարավորություն ստանան: Այսպիսով, կարող ենք նշել, որ օրենքում պետք է նախատեսվեն ապահովված պարտատիրոջ կողմից գույքի իրացման հստակ ժամկետներ:

Ամփոփելով, կարող ենք նշել, որ Օրենքի 39-41-րդ հոդվածներով կարգավորվող մորատորիումի ինստիտուտը ունի որոշակի նորմեր ու իրավակարգավորումներ, որոնք խոչընդոտում են պարտապանի և պարտատերերի իրավունքների և պարտակա-

նությունների իրականացմանը, և անհամատեղելի են իրավական պետության կողմից որդեգրված մոտեցումներին ու սկզբունքներին: Ինչպես նշում է ՀՀ Սահմանադրական դատարանը. «Սնանկության հետ կապված հարաբերությունների իրավական կարգավորումը յուրաքանչյուր պետության տնտեսության կայունության ապահովման երաշխիքներից է»²⁵: Ուստի առաջարկում ենք, որ վերոնշյալ խնդիրները կարգավորվեն սնանկության վերաբերյալ ՀՀ օրենսդրությամբ:

²⁴ Կարծում ենք, որ այս պարագայում խնդիր է առաջանում նաև գույքի իրացման արժեքի հետ կապված, մասնավորապես, մյուս պարտատերերը կարող է չհամաձայնեն ապահովված պարտատիրոջ կողմից գույքի իրացման արժեքին:

²⁵ Տե՛ս ՀՀ Սահմանադրական դատարանի 2008թ. փետրվարի 25-ի ՍԴՈ-735 որոշում:

**ՄՈՐԱՏՈՐԻՈՒՄԻ ԻՆՍՏԻՏՈՒՏԻ
ԻՐԱՎԱԿԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ
ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ
ՄԱՆԿՈՒԹՅԱՆ ՎԱՐՈՒՅԹՈՒՄ**

ՔՐԻՍՏԻՆԵ ՍԱՐԳՍԻ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ

*Երևանի պետական համալսարանի
Իրավագիտության ֆակուլտետի «Քա-
ղաքացիական իրավունք և դատավա-
րություն» մասնագիտացմամբ մա-
գիստրատուրայի 2-րդ կուրսի ուսա-
նողուհի*

ԱՄՓՈՓՈՒՄ

Հոդվածում ներկայացվում է ՀՀ օրենսդրությամբ կարգավորվող մորա-տորիումի ինստիտուտի համակող-մանի վերլուծությունը, ինչպես նաև այս ոլորտում այլ երկրների փորձը: Մասնավորապես, ներկայացված են մորատորիումի սկզբի, մորատորիումի գործողության օրենքով նախատեսված բացառությունների, ապահովված պա-հանջների, մորատորիումի տևողույ-թյան վերաբերյալ ՀՀ գործող օրենսդ-րության մեջ առկա որոշ հիմնախնդիրներ:

Հեղինակը կատարում է որոշակի առաջարկներ, որոնք ուղղված են ոլորտի իրավական կարգավորման բարելավմանը:

Բանալի բառեր - մորատորիում, սնանկության վարույթ, գույքային բռնագանձում, բարեխիղճ պարտա-պան, Քրիստինե Ալեքսանյան:

**ПРОБЛЕМЫ ПРАВОВОГО РЕГУ-
ЛИРОВАНИЯ МОРАТОРИЯ В
ПРОЦЕДУРЕ БАНКРОТСТВА**

**КРИСТИНЕ САРКИСОВНА
АЛЕКСАНИЯ**

*Студент-магистрант 2-ого курса по
специальности «Гражданское право и
судебное разбирательство» Юридичес-
кого факультета Ереванского Госу-
дарственного Университета*

РЕЗЮМЕ

В статье представлен всесторонний анализ института моратория, регулируемого законодательством РА, а также опыт других стран в этой области. В статье в частности обсуждаются про-блемы, связанные с началом моратория, предусмотренные законом исключения от действия моратория, обеспеченные претензии, продолжительность морато-рия в законодательстве РА.

Автор представляет некоторые предложения, направленные на совер-шенствование правового регули-рования этой области.

Ключевые слова: моратория, процедуры банкротства, конфиска-ция имущества, добросовестный должник, Кристине Алексанян.

LEGAL REGULATION PROBLEMS IN BANKRUPTCY PROCEEDURE OF MORATORIUM INSTITUTION

KRISTINE SARGIS ALEXSANYAN

2-year MA student in "Civil Law and Trial" of Faculty of Law at Yerevan State University.

SUMMARY

The article presents comprehensive analysis of the institute of moratorium, as well as foreign experience of other countries. Particularly, the article submits key issues about the beginning of moratorium, exceptions provided by law of moratorium action, the secured claims, duration of moratorium in the legislation of RA.

The author presents some suggestions which are aimed at improving the legal regulation of this field.

Key words: *moratorium, bankruptcy proceeding, property pledge, conscientious debtor, Kristine Alexsanyan.*



ԱՀԱԲԵԿՉՈՒԹՅԱՆ ԴԵՄ ՊԱՅՔԱՐԸ ԵՎ ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ

ՄԱԿ-ի Գլխավոր քարտուղար Անտոնիո Գուտերեշի ճառը Լոնդոնի համալսարանում*

2017 թ., նոյեմբերի 16

Ես շնորհակալություն եմ հայտնում Լոնդոնի համալսարանի Արևելյան և աֆրիկյան հետազոտությունների դպրոցին և հումանիտար հարցերի ճանաչված փորձագետ, նախկին գործընկեր և բարի ընկեր Վալերի Ամոսին նրա համար, որ իրենց նախաձեռնությամբ այսօր մենք հավաքվել ենք այստեղ: Եվ ես նույնպես ցանկանում եմ շնորհակալություն հայտնել ձեզ բոլորիդ, որ եկել եք այստեղ՝ քննարկելու մեր օրերի ամենադժվար խնդիրներից մեկը՝ ինչպես պայքարել ահաբեկչության գլոբալ սպառնալիքի դեմ առանց վտանգելու մարդու իրավունքների նկատմամբ մեր հարգանքը:

Թույլ տվեք հենց սկզբից ամե-նայն պարզությամբ հայտարարել. ոչինչ չի կարող արդարացնել ահաբեկչությունը՝ ոչ մի պատճառաբանություն, ոչ մի դժգոհություն: Ոչ ոք իմունիտետ չունի ահաբեկչությունից: Այն միջազգային խաղաղության, անվտանգության և զարգացման համար դարձել է

աննախադեպ սպառնալիք: Վերջին տասը տարիների ընթացքում հակամարտությունների քանակի ավելացման հետ մեկտեղ աճել են նաև ահաբեկչական հարձակումները: Ահաբեկչությունը տարածվելով ու քայքայելով հասարակության հյուսվածքները ապակայունացրել է ամբողջ տարածաշրջաններ: Անցած տարի ավելի քան 100 երկրներում կատարվել են առնվազն 11000 ահաբեկչական հարձակումներ, որոնց հետևանքով զոհվել են ավելի քան 25000 մարդ և 33000-ը վիրավորվել են:

Որպես գլխավոր քարտուղար մի կազմակերպության, որը «ստեղծված է հանդուրժողականություն դրսևորելու և որպես լավ հարևաններ միասին խաղաղությամբ ապրելու» նպատակով, ես ցավով և տազնապով գիտակցում եմ հասարակության տարանջատման այն վտանգը, որ բերում է համաշխարհային ահաբեկչությունը: Լոնդոնում, այստեղից ոչ հեռու՝ Բրիտանական գրադարանում, պահվում է

* Որպես ՄԱԿ-ի Տնտեսական և սոցիալական խորհրդում (UN ECOSOC) հատուկ խորհրդատվական կարգավիճակ ունեցող ոչ պետական կազմակերպություն, ՀՄԻԿ ՀԿ-ն իր բոլոր պարբերականներում ունի ՄԱԿ-ի գործունեությունը լուսաբանող էջ:

Ազատությունների մեծ հրովարտակր: Ավելի քան 800 տարի առաջ այս հրովարտակով հռչակվել է, որ ոչ ոք չի կարող զրկվել ազատությունից՝ առանց պատշաճ իրավական գործընթացի: Դրանով էլ հիմնվել է իրավունքի տիրապետության սկզբունքը: Եվ չափազանցություն չէր լինի ասել, որ դա հիմք դրեց բոլոր այն ազատություններին, որոնց նկատմամբ ահաբեկիչներն այսօր ուղղակիորեն ոտնձգում են:

Ահաբեկչությունն, ըստ էության, մարդու իրավունքների ժխտումն ու խախտումն է: Եվ մենք պետք է անդադար պայքարենք ահաբեկչության դեմ՝ հանուն մարդու իրավունքների հաղթանակի:

Տիկնայք և պարոնայք, թույլ տվեք մեկ անգամ ևս ընդգծել երկու կարևոր հանգամանք: Առաջին՝ ահաբեկչությունը պետք չէ զուգորդել որևէ որոշակի կրոնի, էթնիկական կամ ռասայական խմբի հետ: Երկրորդ՝ ահաբեկչությունը չունի ոչ մի արդարացում: Այս խնդիրը լուծելու և այս համաշխարհային սպառնալիքի դեմ մեր միասնական դիմակայության արձագանքի արդյունավետությունն ապահովելու համար անհրաժեշտ է դրանք հստակեցնել:

Նախ, պարզ է, որ ահաբեկչական խմբերը օգտագործում են հակամարտությունների գոտիները և անվերահսկելի տարածքները: Երկրորդ, զարգացման անբավարար մակարդակը և կառավարման կառուցվածքի ոչ ներկայացուցչականությունը, ներառյալ ծայրահեղ աղքատությունը, անհավասարությունը, սոցիալական օտարվածությունը և խտրականությունը, նույնպես ահաբեկչությանը և

մարտնչող ծայրահեղականությանը նպաստող գործոններ են:

Հետևաբար, մարդու իրավունքների, մարդու բոլոր իրավունքների՝ ներառյալ տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների ապահովումը, անշուշտ, ահաբեկչության դեմ պայքարի մաս է կազմում: Ես կցանկանայի հնչեցնել հակաահաբեկչական հինգ հիմնական առաջնահերթություններ և ընդգծել, որ մարդու իրավունքների հարգանքը և իրավունքի տիրապետությունը կապահովեն երկարաժամկետ առավելություններ:

Առաջին. Ահաբեկչության դեմ պայքարում մենք ավելի ամուր միջազգային համագործակցության կարիք ունենք:

Երկրորդ. Ահաբեկչության դեմ պայքարի արդյունավետության բարձրացման ջանքերի առանցքային ուղղությունը նրա կանխարգելմանն ուղղված հետևողական աշխատանքն է:

Երրորդ. Անկայունության և դժգոհության արատավոր շրջանի կանխարգելման առավել անվտանգ միջոցը մարդու իրավունքների պաշտպանությունը և իրավունքի տիրապետությունն է:

Չորրորդ. Մենք պետք է հաղթենք գաղափարների պայքարում:

Հինգերորդ. Մենք պետք է օգնենք ահաբեկչությունից տուժածներին՝ բարձրացնելու իրենց ձայնը:

Հենց այս միջոցներով դուք կարող եք երիտասարդներին պահել կեղծ պատրանքներից և օգնել նրանց դառնալ առողջ մտածողներ և կիրթ քաղաքացիներ: Մենք շատ բան ունենք անելու, և ես թախանձագին կոչ եմ անում բոլորին միանալ այս աշխատանքին: Շնորհակալություն ուշադրության համար:

ՄԵՐ ՀԱՍՑԵՆ՝ Հայաստանի Հանրապետություն, ք. Վանաձոր,
Շիրակացու 1-ին նրբ., թիվ 2
URL <http://www.vasnardaroutean.am>
Էլ. փոստ vasnardaroutean@gmail.com
Հեռ. +374 (322) 2-29-67,

ADDRESS: 1 Shirakatsi Lane, Building 2, Vanadzor, Republic of Armenia
URL: <http://www.vasnardaroutean.am>
E-mail: vasnardaroutean@gmail.com
Tel. (+374 322) 2-29-67

ՀԻՄՆԱԴՐՎԵԼ Է 1989թ.

FOUNDED IN 1989

*Գրանցված է ՀՀ Արդարադատության նախարարությունում:
Գրանցման վկայական՝ թիվ 1016*

ISSN 1829-4871

Հիմնադիր և հրատարակիչ՝



**Հայկական սահմանադրական
իրավապաշտպան կենտրոն (ՀՄԻԿ) ՀԿ**

*Ստորագրված է տպագրության 2017թ. դեկտեմբերի 25-ին
Ծավալը՝ 4 տպագր. մամուլ, տպաքանակը՝ 100
Տպագրվել է «Ա.Զ. Սամվել Մաթևոսյան» տպագրատանը*

*Շապիկի դարձերեսին պատկերված են գեղանկարիչ Խաչատուր Ազիզյանի
«Մեր անուշ Հայաստանի կենացը» և «Հայաստանը ես եմ» աշխատանքները:*